



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8296


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՆԵՐԻ. ՄԻԱՅԵՔ.

-- 0

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱԿԱՎ

ՊՅԱՌ-ՀԱՅԻ-ԹԵՐՅԱԾՈՒՅՑ-



ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՈՅՈՒՆ
ՀՈՀԺՈՅՎԱՐԱՆ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՎ ՏԵՍԵԼ

**«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐՆ»-Ի
 ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ**

1.	Ռւդեցույց անտառային աշխատավորի	50 կ.
2.	Ս. Շաղունից.—Մեր անելիքները (սպառված)	20 »
3.	Հ. Փիրումյան և Ա. Մելքոնյան.—ինչո՞ւ ձեռնու ^յ յե դործարանում յուղ և շվեյց. սլանիր պատրաստելը	3 »
4.	Հ. Փիրումյան.—Խոտաբույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառված)	10 »
5.	Է. Ավդալբեգյան.—Հ. Խ. Ս. Հ. Հողային Որենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն տուաջին, աշխատավորական հողողտաղործության (սպառված)	40 »
6.	Պ. Հեֆիմյան.—Թթւնու մշակությունը	10 »
7.	Պ. Հեֆիմյան.—Շերտոմի վորդը, նրա կերակրելն ու խնամքը	10 »
8.	Խ. Յերիցյան.—Կաթնատնտեսության դործնական ձեռնարկ, մտան առաջին (64 նկ.)	1 ռ. 50 »
9.	Կ. Մելիք-Շահնազարյան.—Ծխախոտի մշակությունը	20 »
10.	Ս. Ֆրիդոլինի.—Տառը պատղամ անտանալահին	20 »
11.	Խ. Յերիցյան.—Անհատակաշն, թե՞ կոռպ. կաթնատնտեսություն	10 »
12.	Հ. Հարուրյունի.— բատրակ, կնքիր սլայմանագիր (չափածո)	5 »
13.	Մ. Թումանյան.—Շարքացանքը և նրա նշանակությունը	15 »

ՊՐՈԼԵՏԱՐԻԱ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՐՈՅԻ, ՄՐԱՑԵ

№ 44 «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 44

Ի. ԿՈՒԶՆԵՑՈՎ

15-843
A 82254

ՀԵՆԻՆԸ
ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ



ՀՈՒԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՄԱՐԱՆ

ԹԱՏ 3619 ԳՐԱԴ 234 Բ.

ՏԻՐԱԺ 3000

ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ

Վլադիմիր Իլյիչի արյունատար անոթները (այսինքն՝ յերակները, վորոնցավ արյուն և հոսում) դեռ շատ վաղուց սկսել ելին կարծրանալ։ Արյունատար անոթների այդ կարծրացումը տեղի յե ունենում զանազան պատճառներով։ սովորաբար նա լինում է ժառանգական։ Վլադիմիր Իլյիչի հայրը նույնպես հիվանդացել եր «զարկերակների կրացումով» (այդպես է կոչվում այդ հիվանդությունը) և մոտավորապես նույն այդ հասակում, ինչպես Վլադիմիր Իլյիչը, նրանից վախճանվել է։ (Մայրը նույնպես հիվանդացել եր արյունատար յերակների կարծրացումով)։ Այսպիսով ժառանգականությունը Վլադիմիր Իլյիչին «տրամադրում եր», հող եր պատրաստում այդ հիվանդությամբ հիվանդանալու համար։

Իսկ լարված, գերմարդկային ուղեղային աշխատանքը, մշտական հուզումները ե'լ ավելի ուժեղացրին և արագացրին հիվանդության ընթացքը։

Արյունատար անոթների այդ հիվանդությունը Վլադիմիր Իլյիչը կարող եր ստանալ շնորհիվ իր գերմարդկային աշխատանքի, ու-

Ղեղի մշտական լարվածության և մշտական հուզմունքների:

Մեծ մտածողը և աշխատավորության ռուածնորդն իր ուղեղը յենթարկել եր «գերաշխատության»:

Իսկ վերջին հարվածն ստացել եր նրանից, վոր ուղեղի ամենակարևոր մի մասում պատվել եր արյունատար անոթը: Այդ անոթի պատերը կարծը ելին և վոչ առաձգական: Նրանք պատովել ելին արյան ճնշումից, արյունրդուրս եր յեկել և լցվել եր այդ կարեւոր «կենուրոնը», վորի հետեւանքով Վլադիմիր Իլյիչը կաթված ստացավ և վախճանվեց:

Բարեբախտաբար Վլադիմիր Իլյիչը մահից առաջ չտանջվեց. Հենց վոր արյունը թափվեց ուղեղի մեջ, նա գիտակցությունը կորցրեց ու այլևս գիտակցության չեկավ:

Յերբ բժիշկները հատեցին Վլադիմիր Իլյիչի ուղեղը, ապա զարմացան վոչ թե նրա համար, վոր նա մեռավ (ուղեղի այդպիսի առթներով ապրել անկարելի յեր), այլ նրա համար, վոր նա ապրել եր. ուղեղի մեծ մասը արդեն վտանգված եր, մինչդեռ նա կարգում էր, հետաքրքրվում եր քաղաքական գեպքերով, վորսի եր գնում: Միայն Իլյիչը կարող եր այդպիս ընդունակ լինել մահի դեմ պայքարելու և ուղեղի մնացորդներում պահել մըտ-

քի ամբողջ պայծառությունը և հետաքրքրություն դեպի քաղաքական բոլոր դեպքերը:

Մեր քանիքագին առաջնորդը մեռավ այն պատճեռով, վոր չէ նայեց իր ուժերը, ամբողջ կյանքում աշխատեց, շտապեց և աշխատանիքի ընթացքում հանգստանալու մասին չմտածեց:

Նա ընկավ աշխատավորության ազատագրության մեծ գործի համար:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՍԿՐԶԲԸ

Վլադիմիր ԽԱՅԵ Լենինը ծնվել է գյուղացիության ճորտությունից, այսպես ասած, «ազատությունից» ինը տարի հետո :

Նա ծնվել է 1870 թ., իսկ գյուղացիների ազատությունը տեղի յեւ ունեցել 1861 թ. :

Ճորտատիրության ժամանակ, կալվածատիրական-ցարական որենքներով գյուղացին համարվում եր ստրուկ :

Նա կալվածատեր ազնվականի սեփականությունն եր, նրա իրը : Գյուղացիների հետ վարվում եյին ինչպես անասունի հետ : Կալվածատիրոջ քեֆն ուղած ժամանակ նրան տանում եյին գոմ և մերձ ի մահ ծեծում, կամ շուկա հանում ծախում : Այն ժամանակվա լրացրներում հաճախ կարելի յեր պատահել աղբ դրած ձկան, խոզի և այլ իրերի հայտարարությունների հետ նաև հայտարարություններ այն մասին, թե ծախվում ե տղամարդ, կին, աղջիկ :

Դժվար ե նկարագրել այն ժամանակվա գյուղացիների դրությունը : Կալվածատերը գյուղացու հետ վարվում եր իր քեֆն ուղածի պես : Այդ մասին, նրան վոչ վոք վոչինչ չեր

հարցնում։ Դրա համար նրան վոչ վոք չեր դա-
տում ու դատապարտում։ Գյուղացին ել գան-
գատվելու տեղ չուներ։

Հաճախ գյուղացիների համբերության
բաժակը լցվում եր։ Նրանք ապստամբում ելին
և նույն ձևով ել վարձատրում կալվածատերե-
րին։ Քար ու քանդ ելին անում նրանց տները,
մորթոտում ելին նրանց կանանց ու յերեխա-
ներին։ Գյուղացիական ապստամբությունն ա-
ռանձնապես ուժեղ թափով բռնկվեց Յեկատե-
րինայի ժամանակ։ Այդ ապստամբության գը-
լուին եր կանգնած Յեմելյան Պուգաչևը։ Նը-
րանք գրավեցին Որենբուրգը, Սամարան և
հասան Կազանին։ Յարական իշխանությունը
ճնշեց այդ ապստամբությունը և գյուղացինե-
րին անողոք կերպով պատժեց։ Սակայն, վոր-
քան ել վոր ցարական իշխանությունն աշխա-
տում եր ճնշել այդ ապստամբությունները,
այնուամենայնիվ նրանք չելին դադարում։
1861 թ. նախորյակներին գյուղացիական հու-
զումներ տեղի ելին ունենում այնքան հաճախ,
վոր աղատությունից առաջ վերջին տասը տա-
րում, տարեկան միջին հաշվով տեղի յեր ու-
նենում 30 ապստամբություն։ Բնդհանուր ա-
պստամբության վտանգն ավելի ու ավելի յեր
սպառնալից դառնում կալվածատերերի ու ցա-
րի համար։ Մորթոտվելու վախն ստիպեց նը-
րանց շտապել գյուղացիներին ազատություն

տալու։ Սակայն գյուղացիներին ճորտությունից «ազատեցին» վոչ թե նրա համար, վոր կալվածատերերը և ցարական իշխանությունը վախեցան նրանց ապստամբությունից։ Վոչ, նրանք սովոր եյին ապստամբությունը ձնշերուն։ Գյուղացիներին «ազատեցին» նաև նրա համար, վորովհետեւ կալվածատերերին փող եր հարկավոր։

1861 թ. նախորյակներին նրանք արդեն վատնել ելին իրենց կարողության—հողի մեծ մասը։ Նրանք բանկերում գրավ եյին դրել վոչ միայն իրենց հողերը, այլ և հաճախ գյուղացիներին։ Յեվ վորպեսզի նրանք իրենց վատնած փողերը կարողանան հետ ստանալ, կալվածատերերը Ալեքսանդր II ցարի հետ վորուցին ազատությունը գյուղացիներին ծախել։

Այդ բոլորից բացի, կապիտալիստներն եւ պահանջում եյին, վոր գյուղացիներին ազատություն տրվի։ Նրանց եժան բանվորներ եյին հարկավոր, իսկ բանվորներ կարելի յեր ձեռք բերել միայն գյուղացիներից։ Դրա համար ել նրանք շահագրգոված եյին գյուղացիների ազատությամբ։ Կապիտալիստներին ել հարկավոր եր գյուղացիների այնպիսի ազատություն, վորի ժամանակ նրանք ապրելու հնարավորություն չունենան։

Յեվ այդ ժամանակ մեծ թվով գյուղացիներ կդան նրանց մոտ աշխատանք խնդրելու, իսկ

կապիտալիստներն ել նրանց հուպ կտան, այսինքն՝ ավելի եժան աշխատավարձ կնշանակեն:

1861թ. փետրվարի 19-ին տեղի ունեցավ այն, վորին «ազատություն» են կոչում, մինչդեռ իսկապես այդ գյուղացիների նոր ճորտացում եր:

Կալվածատերերը գյուղացիներից կտրեցին այն հողերի մեծ մասը, վորոնցով ճորտատիրության ժամանակ ողտվում եյին գյուղացիները: Եաւ հաճախ նրանք գյուղացու ձեռքում թողին հողի կեսը կամ մի քառորդ մասը:

Բացի շրանից, նրանք գյուղացիներին ստիպեցին վճարել իրենց ձեռքում մնացած հողի համար: Վճարը շարունակվում եր գանձվել համարյա 50 տարի, մինչև 1905թ.: Գյուղացիները վճարեցին 2 միլիարդից ավելի նախապատերազմյան վոսկի ոռւբլի, մինչդեռ նրանց ձեռքում մնացած հողն արժեր 500-600 միլիոն ոռւբլի միայն:

Գյուղացիները տեսան, վոր իրենց խարել են և հրաժարվեցին այդպիսի «ազատությունից»: Յերկու տարի շարունակ ամբողջ յերկիրը հուզվում եր, սակայն ցարական պլետնու մտրակը հարկադրեցին գյուղացիներին ճանաչել այդ «ազատությունը»:

Յեզ այսպես, Լենինը ծնվեց ինը տարի հետո այն որից, յերբ գյուղացիներին վոչ թե ազատեցին, այլ նորից ճորտացը: Այն ժա-

ժանակ, յերբ նա մեծանում եր, յերբ նա յերեխա յեր, միլիոնավոր գյուղացիներ տանջվում եյին կալվածատիրական—ցարական բոնապետության տակ, միլիոնավոր գյուղացիներ համարվում եյին ազատ, բայց և այնպես առաջվա պես կարվածատերերից հողը վարձով վերցնելով նրանց ճորտն եյին դառնում:

Շատ վաղ Վլագիմիր Իլյիչը գիտակցեց, թե ինչպես ցարական իշխանությունը դաժան կերպով պատժում է նրանց բոլորին, ովքեր ցանկանում են գյուղացիներին ովնել: Այդ բանը նա իմացավ այն ժամանակ, յերբ նրա յեղբորը՝ Ալեքսանդրին ցարը կախել տվեց, վորովհետեւ նա մասնակցել եր կալվածատերերի ու կապիտալիստների դեմ տեղի ունեցած հեղափոխական կռվին: Բայց յեղբոր կախելը նրան չվախեցրեց: Նա 17 տարեկանից, յերբ դեռ գիմնազիայում սովորում եր, սկսեց մասնակցել հեղափոխական պայքարին:

Այն ժամանակ հեղափոխականներից չտերը և առհասարակ նրանք բոլորը, ովքեր գյուղացիության դրության բարելավումն եյին ցանկանում, կոչվում եյին նարոդնիկներ:

Սկզբում նրանք կարծում եյին, վոր բավական ե, ինչպես իրենք եյին ասում, գնալ «ժողովրդի մեջ»—գյուղացիների մոտ, նրանց պատմել, վոր կյանքը պիտի ուրիշ կերպ

գարձնել, և ահա գյուղացիք ամեն ինչ կհասկանան ու այն ժամանակ կարելի կլինի ստեղծել սոցիալիստական հասարակակարգ, կարելի կլինի վոչնչացնել կալվածատերերի ու ցարի բռնությունը:

Յեզ նրանք գնում եյին «Ժողովրդի մեջ» քարոզելու, գյուղացիությանը բացատրելութե ինչպես կարելի յե կյանքը բարելավել: Սակայն նույնիսկ նրանց խորը համոզմունքներից ու խոսքերից հոտ ել գյուղացիները չեյին շարժվում, չեյին ապստամբվում: Իսկ յեթե վոր և ե մի տեղում գյուղացիներն ապստամբում եյին, ապա ամեն մի այդպիսի շարժում ճնշվում եր, գյուղացիներին ծեծում եյին մտրակներով, իսկ նարողնիկներին ցարական ժանդարմները հետապնդում եյին, ձերբակալում, բանտարկում, աքսորում, գնդակահարում:

Այն ժամանակ «նարողնիկների» մի մասը կազմակերպեց «Նարողնայա Վոլյա» կուսակցությունը, վորին մասնակցում եր նաև լենինի յեղբայրը: Նրանք մտածում եյին, վոր բավական ե սպանել ցարին և նրա մինիստրներին, վոր ամեն ինչ լավ լինի: Նրանք նպատակադրվեցին վոչնչացնել տիրապետող վերի խավին: Համոզված, վոր իրենց կախաղան ե սպառնում, այնուամենայնիվ նրանք մի շարք մահափորձեր կատարեցին ցարին, նրա մինիստրնե-

րին և Կմիավոր Ժանդարմներին սպանելու համար:

Նրանք սպանեցին շատ մինիստրներ, նահանգապետներ ու ժանդարմներ, նրանց նույնիսկ հաջողվեց սպանել իրեն, Ալեքսանդր Ա ցարին, հենց նրան, վորր վոչ թե գյուղացիներին ազատեց, այլ ստրկացրեց: Բայց Ալեքսանդր Ա-ի տեղը բռնեց Ալեքսանդր Ա-ը, նրա վորդին, սպանված ժանդարմի, նահանգապետի կամ մինիստրի տեղը բռնում եր մի ուրիշ ժանդարմ, նահանգապետ և մինիստր: Ամենինչ մնաց առաջվա պես: Յեվ միայն բռնությունն եր, վոր ի պատասխան սպանությունների ավելի յեր սաստկանում:

Վլադիմիր Իւլիչ Լենինը, չնայելով իր յեղբոր միջոցով շատ բան եր իմացել նարոգովոլցիների անկեղծ ցանկությունների մասին հնչված, կեղեքված ժողովրդին ոգնելու համար, չնայելով, վոր հետագայում ել նա գրնահատում եր նարոգնիկ-հեղափոխականերից շատերին, բայց և այնպես ինքը նրանց ճանապարհով չզնաց, վորովհետեւ նա տեսնում եր, վոր գյուղացիության համար միայնակ կովելը դժվար է: Նրանք ցրված եյին ու անկազմակերպ:

Վլադիմիր Իւլիչ Լենինը յուր ուշադրությունը բանվորության վրա դարձրեց: Այդ ժամանակ Ծովասատանում նոր եր սկսում զար-

գանալ կապիտալը։ Ստեղծվում եյին Փաքրիկաներ ու գործարաններ, իսկ Փաքրիկաների ու գործարանների զարգանալու հետ աշում էր նաև բանվորության թիվը։

Իսկ վո՞րտեղից Ծուսաստանում առաջ յեկավ այդ բանվոր դասակարգը։

Նա դուրս յեկավ ու զարգացավ հենց նույն գյուղացիության ծոցից։

Գյուղացիները «ազատությունից» հետո մնալով առանց հողի, գյուղում չեյին կարողանում ապրել, նրանք հազարներով քաղաքեյին գնում և վորպես բանվոր վարձվում Փաքրիկաներում և գործարաններում։

Իսկ քաղաքում, գործարանի մեջ կյանքը բոլորովին այլ եր, քան գյուղում։ Այստեղ աշխատում եյին վոչ թե միայնակ, այլ ուրիշների հետ, հարյուրավոր ու հազարավոր նման բանվորների հետ։

Բանվորներն այնպես ցրված չեյին, ինչպես գյուղացիներն եյին ցրված Ծուսաստանի զանազան անկյուններում։ Այսպես, միայն Պետերբուրգի Պուտիլովի գործարանում 10·000 բանվոր կար։ Մորոզովի մանուֆակտուրի մանվածային գործարանն ավելի շատ ուներ։ Կենտրոնական քաղաքներում նրանց թիվը տասնյակ հազարների եր հասնում։ Մի բանվորի կյանքը յուր ծանր պայմաններով վոչընչով չեր զանազանվում մյուս բանվորի կյանքի

պայմաններից : Այդ բոլորի շնորհիվ ել նրանք միանում եյին ու կազմակերպված պայքարում :

Յեվ Լենինը Պետերբուրգում գնում է բանվորական խմբակների մոտ, նրանց բացառը բում է թե ինչո՞ւ նրանց կյանքի պայմանները ծանր են . խմբակներ ե կազմակերպում, նրանց կոչ ե անում կովել բռնակալության, կապիտալիստների և կալվածատերերի դեմ :

Միաժամանակ Լենինը պայքարում էր «նարողնիկների» դեմ :

Նա բո՞ որին ապացուցում է, վոր «նարողնիկները» սխալվել են, նրանց առաջարկած պայքարի միջոցներով հաղթել չեն կարելի, վոր իսկապես ով պայքարում ե ժողովրդի ազատության համար պիտի ուշադրություն դարձնի բանվորական շարժումներ կազմակերպելու վրա : Այդ ժամանակ Լենինը գրեց մի գիտական գիրք — «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» վերնագրով, վորտեղ պարզ է վորոշակի ու թվական տվյալներով ապացուցում եր «նարողնիկների» սխալները :

Արդյոք այս նշանակում ե՞ , վոր այն ասրիներին Լենինը գյուղացիների ծանր դրությունն անտես եր առում :

Այժմ, յուրաքանչյուր գյուղացի գիտե, վոր՝ վոչ : Լենինը գյուղացիության չեր մոռանում, նա միատեսակ կովում եր ինչպես կապիտալիստների, այնպես և կալվածատերերի դեմ :

ԻՆՉԴԵՍ ՍՈՎՈՐԵՑ ԼԵՆԻՆԸ ԼՍԵԼ ԳՅՈՒՂԱՑԻ- ՆԵՐԻ ՁԱՅՆԸ

Ահա՝ թե ինչ ասեց Լենինի կինը՝ Նադեժդա Կոստանտինովնա Կրուպսկայան Խորհուրդների Միութենական Համագումարի նիստում Լենինի մահից հետո արտասանած իր ճառում.

«Նա Պետրոգրադում գնում եր բանվորական խմբակները. գնում եր նրանց պատմելու այն, ինչ վոր ինքը իմացել եր Մարքսից, տալու այն հարցերի պատասխանը, վորոնց նա գտել եր Մարքսի մոտ։ Նա բանվորների մոտ եր գնում վոչ թե վորպես մի զոռողուառցիչ, այլ վորպես ընկեր։ Յեվ վոչ միայն խոսում եր ու պատմում, այլև ուշադրությամբ լսում եր, թե ի՞նչ են ասում բանվորները։ Յեվ Պետրոգրադի բանվորները նրան պատմում եյին վոչ միայն Փարբիկաների կարգ ու կանոնի մասին, վոչ միայն բանվորների ձնշրված գրության մասին, այլև նրան պատմում եյին նաև իրենց գյուղի մասին։ Միությունների տան դահլիճում վլադիմեր Իլյիչի գագաղի մոտ յես տեսա այն բանվորներից մեկին, վորն այդ ժամանակ յեղել եր Վլադիմեր Իլյիչի խմբակում։ Նա Տուլայի նահանգի գյուղացի յեր։ Յեվ ահա Տուլայի նահանգի գյուղացի յեր։

Հանգի այդ գյուղացին, Սիմյանիկովի գործարանի բանվորը Վլադիմիր Իլյիչին ասում էր. «այստեղ քաղաքում—ասում էր—ինձ համար քարոզելը դժվար է. կդնամ իմ Տուլայի նահանգը և կասեմ այն բոլորը, ինչ վոր դուք ինձ ասում էք. յես կպատմեմ իմ հարազատներին, ուրիշ գյուղացիներին, նրանք ինձ կհավատան, չե՞ վոր յես նրանց եմ։ Յեվ այստես վոչ մի ժանդարմ մեզ չի խանգարի»։

Լենին այն ժամանակ ել դեռ գիտեր, վոր գյուղացիությանը պիտի լսել, վոր գյուղացիությունը կդնա բանվոր դասակարգի հետեւից, բանվոր դասակարգը միշտ ել կարող է իր հետեւից տանել ճնշվածներին, յեթե հարկ չեղած գեղքում նրան լսեն։

Նա հենց այն ժամանակ ել տեսնում էր գյուղացիության դրության ամբողջ ծանրությունը։ Ահա թե 1901 թ. նա ինչպես եր նկալագրում գյուղացիության դրությունը։

«Գյուղացու կյանքը հասցրված է ծայր աստիճան աղքատության, նա ապրում էր անառողջության մեջ մեկ տեղ, հագնվում էր ցնցութիներ, կերակրվում քալով։ Գյուղացիները սոված եյին և տասնյակ հազարներով մեռնում եյին սովից ու հիվանդությունից»։

Լենինը գիտեր նաև թե ինչից են գյուղացիները տանջվում։ Նա գիտեր, թե վո՛րտեղ է թաղված չարիքի արմատը. գյուղացուն ճրն-

շում եր կալվածատերը, նրան չազատեցին,
ոյլ ստրկացրին:

**Ահա՛ թե ինչ ե գրեւ Վաղիմիր Իլյիչն այդ
առթիվ.—**

«Գյուղացիներին ազատություն տալուց
անցել է քառասուն տարի... մինչդեռ այդ իս-
կապես յեղել է գյուղացիությանը հողից ա-
զատել. վորովհետև դարերի ընթացքում գյու-
ղացիների տիրապետած հողբաժիններից ա-
հազին հողեր են կտրվել, իսկ հարյուր հազա-
րամոր գյուղացիներ միանգամայն հողազուրկ
են դարձել և ստացել են չնչին հողաբաժին։

Յեվ իսկապես, գյուղացիները կողոպտ-
ված եյին կրկնապատիկ. հերի վեր վոր նրանց
հարկադրում եյին նրանց քողած և մշտապես
նրանց տիրապետության տակ յեղած հողի
համար դեռ փրկագրում ել վճարել. և փրկա-
գրման գինն ել իսկական գներից շատ ավելի
եյին նշանակված։

**Ահա վորպես որինակ, ասենք թե ինչ
արժեր մի դեսյատին հողը փրկագրման և վա-
ճառելու ժամանակ։**

Պետրոգրադի նահանգում մի դեսյատին
հողն արժեր 24 ռուբլի, իսկ փրկագրման ժա-
մանակ՝ գյուղացիներից տանում եյին 61 ռ.
Եռուկվայի նահանգում արժեր 26 ռուբլի.
իսկ գյուղացիներից վերցնում եյին 51 ռ.
33 կ., Տուլայի նահանգում գնելու ժամանակ

1528/43

Հ 8254

վճարում եյին 32 ռուբլի, իսկ գյուղացիներից
շորթում 50 ռուբլի:

Լենինը դեռ այն ժամանակ տեսնում եր,
վոր գյուղացիների և բանվորների շահերն ընդ-
հանուր են, վոր ինչպես գյուղացիները, այն-
պես և բանվորները հավասարապես ձնշված են,
նրանց յերկուսի կյանքն ել ծանր եր: Գյուղա-
ցիներին ձնշում եյին ցարն ու կալվածատերը,
բանվորներին՝ ցարն ու կապիտալիստը: Ռու-
սաստանու՝ կալվածատերերն ու կապիտա-
լիստները միացել եյին և միասին ել կովում
եյին ինչպես գյուղացիների, նույնպես բան-
վորների դեմ: Կալվածատերերին և կապիտա-
լիստներին եր ծառայում միայն ժանդարմե-
րիան, վոստիկանությունը, զորքը, դտարա-
նը, պաշտոնեյությունը: Հոկտեմբերյան հեղա-
փոխությունից համարյա 25 տարի առաջ Լե-
նին ասել եր, վոր գյուղացիներն ու բանվորնե-
րը իրենց պայքարի համար պիտի միանան:

Թեև գյուղացիների համեմատությամբ
բանվորները քիչ են, բայց նրանք միացած են,
տոկուն են, դիսցիպլինայի յենթարկված և սո-
վոր են կազմակերպված պայքարելու: Գյուղա-
ցիները թեև շատ են, բայց նրանք ցըված են ու
բաժան-բաժան:

Յեթե գյուղացիների բազմամիլիոն մաս-
սան համախմբվի բանվոր դասակարգի շուրջը,
վոր միացած լինելով պայքարում ե կազմա-

կերպված ձեռվ—ապա նա ընդունակ կլինի իր
կռիվը մինչև վերջը տանել, չցրվել, չբաժան-
վել, հաղթվելուց հետո, յեթե գյուղացիները
միանան պրոլետարիատի պայքարին—նրանք
կարող են ճնշումներից ազատվել:

«Գյուղացիությունը ննշումից՝ կարող է
ազատվել միայն բանվորական շարժմանը միա-
նալով, ոգնելով բանվորությանը սոցիալիս-
տական հասարակարգի համար նրա պայքա-
րում»: Դեռ այն ժամանակ գրել ե Վլադիմիր
Իլյիչ Լենինը:

ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ 1905 թ. ՆԱԽԱՊԱՏՐԱՍ- ՏԵՅ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՌԱ- ԶԻՆ ՄԻԱՅՅԱԼ ՊԱՅԺԱՐԸ

Թուսաստանում չկա մի աշխատավոր,
վոր չգիտենա, թե Լենինը վոչ միայն ցույց է
տվել կալվածատերերի ու կապիտալիստների
դեմ կռվելու ճանապարհը, այլ և զործնակա-
նորեն ղեկավարել ե այդ պայքարը:

Սակայն մենք քիչ զիտենք այն մասին,
թե ինչպես ե Լենինը նախապատրաստել այդ
պայքարը, թե ինչպես նա իր ամբողջ կյանքը
նվիրել ե այդ գործին:

Վլադիմիր Իլյիչն իր կյանքի մեծ մասն
ստիպված ե յեղել անցկացնել արտասահմա-
նում: Սիրերի եր յեռամյա աքսորից ա-
զատվելով, նա 1900 թ. մինչև 1905 թ. ապրել
է արտասահմանում:

Կարելի յե կարծել, վոր կտրված լինելով
Թուսաստանից, նա կարող եր կտրված լինել
նաև Թուսաստանի բանվորների ու գյուղացի-
ների պայքարից: Մինչդեռ իրոք հակառակն է
յեղել: Նա շարունակ ուշադրությամբ հետեւել
է, թե ի՞նչպես ե ամրանում և աճում այդ պայ-
քարը: Բանվորական վոչ մի շարժում, վառ
արտահայտված գյուղացիական վոչ մի ան-

բավականություն չեր վրիպում նրա ուշադրությունից :

Նախքան Լենինի արտասահման գնալը, Ռուսաստանում բանվորական շարժումն արդեն սկսել էր աճել: 1890-1892 թ. թ. գործադրությունների ալիքը բռնել եր ամբողջ Ռուսաստանը. այն ժամանակ, յերբ Լենինը դեռ Սիրիբումն էր (1898 թ. մարտի 1-ին հ. տ.) . տեղի ունեցավ բանվորական հեղափոխական բոլոր առանձին խմբակների միացումը և կազմակերպվեց Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը: Այս բոլոր խոսում եր ծավալվող պայքարի մասին:

Յեզլ Վլադիմիր Իլյիչ Լենինի արտասահմանից դեկավարում եր այդ շարժումը:

ԲԱՅԼԵՎԻԿԻՎԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՍԶՄԱ- ԿԵՐՊՎԵԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂԱ- ՑԻՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՆՎՈՂ ՊԱՅՖԱՐՈՒՄ

Արտասահման հասնելու որից Վլադիմիր
Իլյիչն իր ամբողջ ուժերը լարեց ստեղծելու
մի այնպիսի կուսակցություն, վորն ընդունակ
լիներ պաշտպանելու բանվորների և գյուղացի-
ների շահերը, կարողանար ղեկավարել նրանց
կոիվը ճնշողների և հարստահարողների դեմ,
մի կուսակցություն, վորը յերբեք, նույնիսկ
ամենածանր ու դժվարին պայմաններում ան-
գամ չդավաճաներ աշխատավորության գործին:

Այդպիսի կուսակցություն, ինչպես վերն
ասվեց, հիմնվեց 1898 թ. և կոչվեց՝ Սո-
ցիալ-Դեմոկրատական, սակայն վորի առաջին
համագումարին ժամանակակիցները, համագումա-
րից անմիջապես հետո, ձերբակալվեցին: Կու-
սակցությունը չուներ վոչ ծրագիր, վոչ կանո-
նադրություն. չկար ընդհանուր կազմակեր-
պություն. աշխատանքը կատարվում եր ցիր
ու ցան կերպով, վոչ համախմբված և առանց
ընդհանուր ղեկավարության:

Կուսակցության 1903 թ. համագումարում

միաձայն ընդունվեց կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը, մշակվեց կազմակերպության ծրագիրը։ Սակայն կուսակցությունը միասնական ճանապարհով չդնաց. նահենց համագումարում բաժանվեց համարյայերկու մասի—բայլշևիկների և մենշևիկների։

Բայլշևիկների գլուխն անցավ մեր առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Այդ ժամանակից սկսած նա անհաշտ կռիվ եր մղում մենշևիկների դեմ։ Ի՞նչի համար Լենինը մենշևիկներից անջատվեց։

Այդ ժամանակ բանվորներից և գյուղացիներից բացի, ցարական կարգերից դժգոհ եր նաև բուրժուազիայի մի մասը։ Այդ բուրժուազիային, այսինքն այդ ժամանակվա գործարանատերերին, վաճառականներին և ինտելիգենցիայի (պրոֆեսորների, բժիշկների և այլն) ցարն ու կալվածատերերը մոտ չեյին թողնում իշխանության։ Ցարիզմը հետեւում և ճնշում եր վոչ միայն բանվորներին ու գյուղացիներին, այլ և առաջ չեր քաշում նաև բուրժուազիային։ Այդ դրությունից դժգոհ, բուրժուազիայի մի մասը (նրանք կոչվում եյին պատամիտներ) պրոֆեսորների, բժիշկների և ուրիշ ինտելիգենտների հետ միասին նույնպես կովում եյին ցարիզմի դեմ։ Նրանք ցարից և աղնվականներից իրենց համար զիջումներ եյին պահանջում, ձգտում եյին ցարին և աղնվա-

կաններին հարկադրել, վոր՝ նրանք իրենց հետ
իշխանությունը բաժանեն։ Ի հարկեալ այդ բուր-
ժուազիան իր պրոֆեսորների, բժիշկների և
այլոց հետ չեր մտածում բանվորների և գյու-
ղացիների շահերի պաշտպանության մասին։
Նա ցարից ազատություն պահանջում եր միայն
իր համար։

**ՅԵՎ ահա մենչեիկները թեքվում եյին դե-
պի այդ բուրժուազիայի և ինտելիգենցիայի
կողմը։**

Նրանք ձգտում եյին այնպիսի կառավա-
րություն ստեղծել, վոր պետքական լիներ նաև
բուրժուազիայի այդ մասի համար։

Լենինը տեսավ, վոր մենչեիկները մի այն-
պիսի ճանապարհ են բռնել, վորը նրանց վերջ
ի վերջո տանելու յէ դեպի բանվորության գոր-
ծի, բանվորների և գյուղացիների շահերի դա-
վաճանության։ Նա տեսավ, վոր այդ նաևա-
պարհը տանում ե վոչ թե դեպի դաշինք գյու-
ղացիության հետ, այլ դեպի դաշինք՝ բուր-
ժուազիայի հետ։

Լենինն ասում եր, այն կուսակցությունը,
վոր ցանկանում ե վոչնչացնել կապիտալիստնե-
րի և կալվածատերերի լուծը, պիտի պայքարէ
գյուղացիությանը հող տալու համար։

1905 թ. մայիսին բայլշեիկների կուսակ-
ցությունը Լենինի դեկավարությամբ, վերջնա-

կանապես վորոշում և դեպի գյուղացիությունն անեցած իր վերաբերմունքը :

«Կուսակցությունն իր յերրորդ համազումարում ընդունած քանակուով ուղղակի խոսում է գյուղացիության հեղափոխական պահանջների պաշտպանության մասին, անգամ բոլոր մասնատիրական հողերի բռնագրավմամբ (Լենինի «Պրոլետարիատը և գյուղացիությունը» հոդվածից) :

**ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՅՖԱՐԸ 1905 թ. ՅԵՎ
ՆՐԱ ԴԱՍԵՐԸ**

**ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ
ԴՐԱԽԹՅՈՒՆԸ 1905 թ.**

Բանվորների մեծ մասը գործարաններում
աշխատում եր 12 ժամից ավելի: Այդ ծանր
աշխատանքի համար նրանք ստանում եյին շատ
չնչին աշխատավարձ: Փողը չեր բավակա-
նացնում: Նրանց ընտանիքները սովոր եյին:
Ավագ վարպետների և վերահսկիչների կողմից
բանվորները յենթարկվում եյին արհամարան-
քի և ծաղր ու ծանակի: Պակաս ծանր չեր նաև
գյուղացիության դրությունը: Ցարը և կալ-
վածատերերը դեռ շարունակում եյին նրանց
«ազատության» համար փրկարգում ստանալ:
Գյուղից-գյուղ թափառում եյին հարկահան-
ները: Գյուղացիների մեծ մասը վճարելու վո-
չինչ չուներ: Հաճախ նրանք ստիպված եյին
լինում ծախել իրենց հացի վերջին պաշարն ու
կովը և ձմեռվա կեսից ապրել կիսաքաղց դրու-
թյամբ: Ստիպված եյին ծախել իրենց անա-
սունները, հարկերը վճարելու համար կուլա-
կից փող վերցնել և ավելի ու ավելի դառնալ
նրա ստրուկը:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵԼՈՒՅԹԸ

Ինչպես բանվորների, նույնպես և գյուղացիների գրությունը բացարձակապես անտառնելի յեր դառնում։ Անբավականությունը հասունանում էր։ Աստիճանաբար բոլոր բանվորների համար պարզվում էր, վոր այս գրությանն այլևս հանդուրժել չի կարելի. պետք էր այս գրությունից դուրս գալ, պետք էր այն փոխել, բարելավել։

Այժմ յուրաքանչյուր բանվորի և յուրաքանչյուր գյուղացու համար միանգամայն պարզ է, վոր ցարից, կալվածատերերից ու կապիտալիստներից առանց պայքարի չեր կարելի ստանալ կյանքի պայմանների թեկուզ ամենափոքրիկ բարելավում։ Մեզ բոլորիս հասկանալի յե, վոր պետք էր տապալել ցարական կարգերը։ Բայց այս բոլորը մեզ համար պարզ և հասկանալի յեն այժմ, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միայն։ Բայց այս բանը 1905 թ. սկզբին այնքան ել պարզ չեր յուրաքանչյուր բանվորի համար։

Ընդհակառակն, 1905 թ. սկզբին բանվորներից շատերը կարծում եյին, վոր ցարը, կալվածատերն ու գործարանատերը միևնույն բաները չեն։ Նրանք կարծում եյին, վոր իրենց

Ճնշում ու հալածում ե միայն կապիտալիստը—
գործարանատերն ու ֆարբիկանուր։ Նրանք
հավասարացած եյին, վոր ամբողջ դժբախտու-
թյունը հենց նրա մեջ է, վոր իրենց կարիքնե-
րի, իրենց ցավերի ու հարստահարությունների
մասին ցարը վոչինչ չգիտի։ Նրանք կարծում
եյին, վոր բավական ե իրենք գնան մոտը և
նրան պատմեն, թե վորքան ծանր ե իրենց
կյանքի պայմանները—նա ամեն ինչ կանի,
իրենց կողնի և ճնշումներն ու հալածանքերը
կարգելի։

Յեվ ահա, 1905 թ. Հունվարի 9-ին, բան-
վորները գնացին ցարի մոտ՝ նրան պատմելու
իրենց կյանքի դժվարությունների, իրենց ցա-
վերի, իրենց կարիքների ու դժբախտություն-
ների մասին և խնդրելու, վոր իրենց գրությու-
նը բարելավի։

Բանվորների բազմահազար ամբոխին դե-
պի պալատ տարավ Գապոն քահանան։

Բանվորներն սպասում եյին, վոր իրենց
կումավորի «սիրալիր և բարի ցարը», վոր նա
նրանց իրեն մոտ կթողնի, կհարցնի թե բանն
ինչումն ե, կողնի և կթեթևացնի իրենց կյան-
քը։ Բայց այդ ցարը իմանալով, վոր բանվոր-
ները դեպի պալատ են գալիս, զինվորներին
չըամայեց կրակել։ «Բարի ու սիրալիր» ցարի
փոխարեն նրանց դիմավորեցին գնդակներն ու
օդինները։

Պարզվեց, վոր Գապոն քահանան ցարական ժամանակամատի ծառայող էր։ Պետերբուրգի բանվորներն իրենց հավատի ու վստահության համար տուժեցին։ Նրանք պալատի առաջ իրենց հայրերից, յեղբայրներից, քույրերից հաղարափոր դնդակահարվածներ թողին։

Զմերային պալատի առաջ սպանվածները, բոլոր ճառերից և բոլոր համոզումներից ավելի լավ ապացուցեցին, վոր ցարին վոչ թե պիտի խնդրել, այլ պիտի վոչնչացնել, տապալել։ Բանվորներն իրենց կյանքը բարելավելու համար վոչ մի տեղից սպասելիքներ չունեյին։ Վոչ վոք նրանց չի ոգնի, իրենցից բացի։

Ութ ամիս հետո բանվորները պայքարի յելան։ Համարյա բոլոր կենտրոնական քաղաքներում գործադուլներ սկսվեցին։

Յերկաթուղիների մեծ մասը գործադուլ արեց, հսկայական գործարանները մեռան, կյանքը կանգ առավ։

Ցարը, կալվածատերերն ու կապիտալիստները հուզվեցին։ Նրանք վախեցան և սկսեցին տպատություն խոստանալ։

Նույնիսկ մանիֆեստ հրատարակվեց, վորում ասվում եր, թե կհրավիրվի ժողովրդակայացուցչություն—Դումա։

Սակայն, բանվորները գիտեյին այդ խոստումների արժեքը։ Նրանք կանգ չառան։ պայ-

քարը շարունակվում եր: Պետերբուրգում կաղ-
մակերպվեց Բանվորների և Գյուղացիների
Ներկայացուցիչների Խորհուրդ: Այդ խորհուր-
դը սկսեց ղեկավարել նրանց պայքարը:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Բանվորների մղած պայքարի արձագանք-
ները շուտով գյուղերը հասան:

Գյուղացիական շարժումներն սկսվեցին
1905 թ. գարնանից: Գյուղացիների գարնան
և ամրան ամիսների «անկարգությունները» 62
դավառ ընդդրկեցին: Գյուղացիները պայքա-
րում եյին կալվածատերերի ղեմ, զանազան տե-
ղերում և բաժան-բաժան:

Մի քանի տեղերում ամեն ինչ անցնում եր
խաղաղ, մի քանի տեղերում ել գյուղացիները
հիմնովին քայքայում եյին կալվածատերերի
տներն ու կալվածները:

Գարնան և ամրան շարժումների ժամա-
նակ, մի քանի տեղերում, գյուղացիները կըտ-
րատել եյին կալվածատերերի անտառները.
Վոչնչացրել եյին նրանց արոտատեղերը, շատ-
էպքերում ել իրենց մեջ եյին բաժանել կալվա-
ծատերերի ունեցած հացը, անասունները և
նրանց այլ ունեցվածքները: Իսկ շատ տեղե-
րում ել հաջողեցրել եյին իջեցնել վարձակա-

լության վճարները և բարձրացնել որավարձով
աշխատող բանվորների աշխատավարձը:

Այսպես, հունիս ամսին, յերաշտի պատ-
ճառով կենտրոնական սևահող շրջանում, գյու-
ղացիները ինքնակամ կերպով սկսել եյին ոգտը-
վել խոտհարքներից ու արոտավայրերից:

Ատկարա գավառում, յերաշտի չնորհիվ,
բոլորովին փչացան գյուղացիների ցորենի ցան-
քերը և մարդագետինների խոտը: «Հունիսին
այդ գավառում գյուղացիները գերանդիներով
ու իրենց նախիրներով դուրս յեկան և հարեցին
ազնվականների ու վաճառականների մարդա-
գետինների խոտերը»:

Ուրիշ տեղերում (Բամբըրովսկի գավա-
ռում) գյուղացիները, գյուղական ընդհանուր
ժողովի վորոշմամբ, իրենք նշանակեցին խոտ-
հարքների գինը և իրենք ել հնձեցին կալվածա-
տերերի ու վաճառականների խոտհարքները:
Բալաշովի, Պետրովի և այլ գավառներում կալ-
վածատերերի դաշտերից գյուղացիք խուրձերը
տարան իրենց կալերը:

Կուրսկի նահանգում գյուղական յոթ հա-
մայնք մի որում 80 սայլ ուղարկեց անտառ ու
մի գիշերվա մեջ կտրեց ծառերի մեծ մասը:
Անտառների այդպիսի հատումներ տեղի եյին
ունեցել նաև այլ վայրերում:

Պոդոլի նահանգում 8 ժամյա աշխատան-
քի համար գյուղացիները պահանջել եյին աշ-

խառավարձը բարձրացնել աղմարդկանց համար մոտ 1 ռուբլի, կանանց համար՝ 75 կոպ. և անչափահասների համար՝ 50 կոպ.։ Դրա հետ միասին գյուղացիները շրջում եյին և դաշտային աշխատանքներից հեռացնում բռյուր բատրակներին։

Կարելի յէ նման շատ յերեւյթներ ել նըկարագրել։ Սակայն դրանով չեր սահմանափակվում գյուղացիների յելույթները։ Սա դեռ սկիզբն եր, և ինչպես ասում են՝ դրանք «ծաղիկներն եյին, պտուղներ հետո եյին լինելու»։

Այդ ժամանակ շատ տեղերում այսպես եր լինում. «Գյուղացիները գալիս եյին մասնատիրական տնտեսությունները և այստեղից իրենց անասունների համար կեր տանում։ Մինույն ժամանակ ճշտությամբ հաշվում եյին կալվածներում մնացած անասունները և նրանց կերակրելու համար կալվածտիրոջը թողնում հմապատասխան քանակությամբ կեր, իսկ մընացածը իրենց սայլերով տանում եյին։

Գյուղացիական ապստամբություններն ավելի ուժեղացան աշնանը։ Հոկտեմբերյան գործադուլները և Պետերբուրգի, Մոսկվայի ու Մրդյունաբերական այլ կենտրոնների բանվորների ապստամբությունները գյուղացիական կոիվների ուժեղացման աղդանշան հանդիսացան։

Գործում եյին հանգիստ, առանց բռնու-

թյունների, «խղճով», ձգտելով համազել, վորպեսզի «վոչմի խայտառակություն» չլինի: Կարվածատիրոջ բացատրում ելին, վոր այժմ նոր ժամանակներ են և պիտի ապրել նրա համաձայն, վոր ունեցողը բաժին պիտի հանի նըրան, ով վոշինչ չունի:

1905 թվի աշնան գյուղացինների շարժումներն իրենց ծավալով մի քանի անգամ զերազանցում ելին գտրնան և ամրան շարժումներին: Աշնանը գյուղացիական ապստամբությունները ընդգրկել ելին ավելի քան 160 գավառ:

Գյուղացիական շարժումների ուժեղացման վրա ազդեց նաև սովոր:

Շատ աեղերում գյուղացիությունը ձըգում եր զրավել կարվածատիրական հողերը և բաժանել կարվածատերերի շտեմարաններում ամբարված ցորենը:

Ինչու ամսությունը, աշնան ել նրանք ոկզրում ցանկանում ելին ամեն ինչ անել խաղաղությամբ, կարվածատիրոջ հետ ամեն ինչ բաժանել արդարությամբ և առանց խայտառակության, բացատրելով, վոր այժմ նոր ժամանակներ են:

Սակայն կարվածատերերը, վորոնց ըրայից մի քիչ վերացել եր ամառվա վախը, սկսեցին դիմադրություն ցույց տալ: Այն ժամանակ գյուղացինները փոխանակ նրանց համոզելու,

ուլսկցին նրանց հետ վարվել, ինչպես վոր պետք էր—նրանց կալվածներից դուրս քշեցին:

Շարժումներն առանձնապես ուժեղ եյին Մերձվոլգյան շրջանում, այստեղ բոլոր վարչառներում տեղի յեր ունենում հետևյալը. «Առավոտյանից դուք տեսնում եյիք ֆարդկանցով լիքը կառքերի շարաններ, վորոնք փախչում եյին կալվածներից. իսկ մութն ընկնելուն պես ամբողջ յերկինքը հրդեհից առաջացած կրակի ցոլքերից կարմրում եր. գիշերներ եյին լինում, վոր նման հրդեհների թիվը հասնում էր 16-ի:

Այդ ժամանակ ավերված կալվածների թիվը հաշվում եր.

Սարատովի նահանգում	272
--------------------	-----

Տամբովի	»	133
---------	---	-----

Որլովի	»	84
--------	---	----

Պենզայի	»	30
---------	---	----

Կուրսկի	»	127
---------	---	-----

Բալտյան շրջանում	260
------------------	-----

Ամբողջ յերկրում հրդեհված և ավերված էր 2000-ից ավելի կալվածատիրական դաստիակերտներ:

Կալվածատերերի վնասները բավական խոշոր եյին, որինակ՝

Սարատովի շրջանում	9·550·320	ռուբլի
-------------------	-----------	--------

Տամարայի	»	3·915·012	»
----------	---	-----------	---

Կուրսկի	»	3·052·148	»
---------	---	-----------	---

Չերնիգովի շրջանում	3·000·000	ռուբլի
Տամբովի	»	2·475·608
Խերսոնի	»	1·778·900
Վարոնեժի	»	1·018·3146

Իսկ մյուս նահանգներում մի փոքր քիչ
Ամբողջ Ռուսաստանում այդ վնասները հաշվ-
վում եր մոտ 29 միլիոն ռուբլի:

1905 թՎԻ ՊԱՅՖԱՐԻ ԴԱՍԵՐԸ

1905 թ. աշնան յերեք ամիսները ապացուցեցին, վոր այն, ինչ Լենինը գրել էր դեռ 1901 թ., գործնականապես իրականացավ 1905 թ.: Գյուղացիությունը պրոլետարիատի հետ միտուին պայքարի դուրս յեկավ: Գյուղացիությունը զգաց, վոր միայնակ չե, վոր ինքն ունի ուժեղ դաշնակից, ուժեղ զեկավար: Բայց այդ բանը զգաց վոչ միայն գյուղացիությունը, այդ զգաց նաև բռնակալությունը:

Իր գոյության ամբողջ ժամանակաշրջանը նա առաջին անգամ շփոթվեց, վախեցավ, յերերվեց և զիջումների զնաց:

Յեթե սկզբներում բռնակալությունը գյուղացիական բոլոր շարժումներն առանց հաշվի առնելու ձնշում էր, այս դեսլքում, շակայն, նա մի տեսակ շփոթված՝ սկսեց զիջումներ անել: Վախեց նույնիսկ ազատություն խոստացավ—հրատարակեց Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը:

Լենինը տեսավ, վոր այդ խարերայությունները, վոր գրանով ուղում են խարել, ժամանակագորապես թուլացնել պայքարը, և ցարական ժանդարմերայից թագնվելով՝ զեկավարում եր

պրոլետարիատի պայքարը, գյուղացիությանը
բացառում եր, վոր բանվորների սկսած պայ-
քարը, միևնույն ժամանակ հանդիսանում է
գյուղացիության շահերի պաշտպանության
պայքար, պայքար կարվածառերերի դեմ:

«Գյուղացիությունը պիտի իմանա, վոր
ժաղաքներում բարձրացրած կարմիր դրաշակը,
վոչ միայն արդյունաբերական և գյուղական
բանվորների առաջիկա ու կենսական պահանջ-
ների պայքարի դրոշակն է, այլ և նա հանդիսա-
նում է նաև միլիոնավոր ու տասնյակ միլիոնա-
վոր մանր հողատերերի պահանջների դրոշակը:
Ճորտատիրական կարգերի մնացորդները հա-
զար ու մի ձևերով մինչև այժմ անողոք կերպով
ննջում են գյուղացիական մասսային և պրոլե-
տարիատը կարմիր դրոշակի տակ պայքար է
հայտարարել այդ ննջման դեմ:

Լենին ասում էր, «Վոր հեղափոխության
լիակատար հաղթանակը միայն կարող է գյու-
ղացիությանը հողային բարենորոգումների
ասպարիզում տալ այն ամենը, ինչ վոր գյու-
ղացիությունը ցանկանում է, ինչի մասին նա
յերազում է, ինչ վոր իսկապես անհրաժեշտ է
նրան»:

ԼԵՆԻՆԸ 1905 թ. ԿԵՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒ- ԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՅԵԼ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԱ- ՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՖԱՐԻՑ ՄԻ ՔԱՅԼ ԱՆԳԱՄ ՉՆԱՀԱՆՁԵՑ

Պրոլետարիատի և գյուղացիության միաս-
նական յելույթն առաջին անգամ տեղի ու-
նեցավ 1905 թվին միայն, ի հարկ և, այդ բանը
չեր կարող չանդրադառնալ պայքարի հաջո-
ղության վրա։ 1905 թ. հեղափոխության հիմ-
նական բացը՝ կովող ուժերի ցրվածությունն
եր։ Գյուղացիությունը բավականաչափ համե-
րաշխությամբ չեր աջակցում կովող պրոլետա-
րիատին, գյուղացին վոչ ամենուրեք հասկա-
ցավ այդ պայքարի իմաստը և շատ գանդաղ ու
բանվորի հետ վոչ համեմատ։

1905 թ. հեղափոխությունը ճնշվեց։ Յա-
րական կառավարությունը տոնում եր այդ
հաղթանակը։ Յերկրում ոկտեց թագավորել
ու եակցիան։ Ժանդարմական մարտկր Ռուսա-
տանի զանազան ծայրերում «խելոքացնում եր»
խոռվարարներին։

Շատերը վհատվեցին, շատերը հուսահատ-
վեցին, շատերը իրենց հավատը կորցրին, իսկ
իւսիչ—կենինը հենց նրանով եր մեծ, վոր այդ
ընդհանուր վհատության և հուսահատության
լոպեներին—չառանվեց։ Նո յերբեք չդադա-

րեց հաղթելուն հավատալուց, ընդհակառակն՝ վորքան ուժեղ եր ճնշում, այնքան ավելի յեր ուժեղանում նրա ատելությունը դեպի ճնշողները, այնքան ավելի կտրուկ և բարձր եր հընչում նրա կոչք:

Պարտության այդ բովեներին ահա թե ի՞նչ եր գրում նո.

«Բանվորնե՛ր, գյուղացինե՛ր և բոլոր աշխատավորնե՛ր, մի՛ մոռացե՛ք այդ մեծ դասը»:

«Հիշեցե՛ք, վոր 1905 թ. աշնանը, յերբ պայքարող ժողովրդին առաջնորդում եյին հեղափոխական բանվորները, յերբ բանվորների գործադուլներին ու ապստամբություններին միացան նաև գյուղացիների և գիտակից զինվորների ապստամբությունը—այն ժամանակ կատավարությունը զիջումներ արեց:

Հետո, 1907-1908 թ.թ., յերբ մենշևիկների կուսակցությունն ասում եր, թե հողային—գյուղացիական հարցի լուծումը պիտի հանձնել «զեմստվոյին», այսինքն նույն կալվածատերերին ու բուրժուազիային՝ ճիշտ եւ այն բուրժուաներին, վորը ցարից դժգոհ երկենինն ասում եր, վոր այդ «զեմստվոյականները» գյուղացիներին կիսաբեն, նրանք գյուղացիությանն այնպես հող կտան, ինչպես ավեցին 1861 թվին:

Նա շարունակում եր հանուն գյուղացիության շահերի պաշտպանության պայքարը։ Նա

Դումայում պահանջ գրեց, վոր հողային խրնութիւնը լուծումը հանձնվի գյուղացիական հանձնաժողովներին։ Դումայի ընտրողներին ուղղած իր նամակում նա գրում էր.

«Մենիք պիտի պահանջենիք բոլոր արքունական, յեկեղեցական, վասիքապատկան և բոլոր կալվածատիրական հողերի բռնազրավում»։

ԱՏՈԼԻՊԻՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԸ

1905-1906 թ. թ. գյուղացիական ապստամբությունները վախեցրին բոլոր կալվածատերերին։ Սակայն այդ վախը նրանց մեջ կար վոչ միայն 1905 թ. հեղափոխության ժամանակ, այլ և նրանից հետո, յերբ նույնիսկ հեղափոխությունը ձնշված էր։

Այդ առթիվ Վլադիմիր Իլյիչը ասում էր. «կալվածատրական կանավարությունը սարսափում էր իր գոյության համար»։ «Սարսափելի յե գյուղացիական մասսայի «ձայնի» (և շարժումների) հանդեպ»։

Այն անսանձ կատաղությամբ, վորով աշակողմյանները հարձակվում են հեղափոխության, վերջապես 1905 թ. ապստամբության և առաջին յերկու Դումաների վրա, ավելի լավ, մասն յերկար ու բարակ դատողությունները ապացուցում են, վոր ինքնականության պահպանները իրենց առաջ տեսնում են կենդանի քշնամի, վոր հեղափոխության դեմ կոփը նրանք վերջացած չեն համարում, վոր նրանք ամեն բռպե, վորպես ամենաիրական ու անմիջական սպառնալիք՝ տեսնում են հեղափոխության վերածնվելը»։ **Այլ կերպ եւ լինել չեր կարող չե՞ վոր 1905 թ.**

գյուղացիությունը կռվում եր հողի համար, վորպեսզի կալվածներից դուրս քշեր կալվածատերերին և նրանց հողերն ինքն ոգտագործեր։ Այդ բանը 1905 թ. գյուղացիությանը չհաջողվեց իրագործել։ Յարական-կալվածատիրական կառավարությունը այդ ժամանակ դիմացավ։ Գյուղացիությունը առաջվա պես մնաց առանց հողի, առաջվա պես մնաց նրան ծարավի։ Դումայում անկուսակցական գյուղացիների ճաները այդ եյին արտահայտում։ Այսպես՝ մի գյուղացի ասաց. «Յերբ յես ունեմ 3 դես. հող, իսկ կալվածատերը 3000 դես., ապա դա կարդու արդարություն չի»։ Յարական կառավարությունը տեսնում և զգում եր այդ։ Նա սկսեց այդ դրությունից դուրս գալու յելք փնտռել։ Սակայն պետք եր մի այնպիսի յելք փնտռել, վոր հնարավոր դարձներ կալվածատերի հողային սեփականության իրավունքը և գյուղացիությանը վոչինչ չտար ու միևնույն ժամանակ ուժեղացներ ցարական-կալվածատիրական կառավարության դիրքը։

Այդ յելքը ցարական կառավարությունը տեսնում եր հողային մանր սեփականություն ստեղծելու մեջ, այսինքն՝ խոշոր կալվածատերերի (վորոնք հաղարավոր դեսյատիններով հող ունին) կողքին գյուղացիներից ստեղծել ավելի մանր սեփականատերեր, վորոնք կունենային տասնյակ դեսյատիններով հող։ Յարա-

կան-կալվածատիրական կառավարությունը սկսեց ձգտել ստեղծելու ուժեղ գյուղացի կու-րակ, վորք նույնպես կպաշտպաներ հողի սեփա-կանությունը:

Այդ քաղաքականության կիրառման ցա-րական կառավարությունը ձեռնամուխ յեղավ 1905 թ. նոյեմբերի 9-ին, հրատարակելով ո-րենք, վոր կոչվեց «Սոոլիոլինյան որենք»:

Այդ որենքի իմաստն այն էր, վոր գյուղա-ցիներին իրավունք եր տալիս, վորպես անձնա-կան սեփականություն իրենց վրա հաստատելու խոստացված հողարտինը և ստեղծելու հա-մածային կամ ազարակային տնտեսություն:

Հասվածային և ազարակային տնտեսու-թյուններ ստեղծելու շարժումներն սկսվեցին 1907 թ., վորպիսի տնտեսություններ ստեղծե-լու համար այդ ժամանակ դուրս յեկան 48 հա-զար ծուխ, այդ շարժումն իր զարգացման գա-գաթնակետին հասավ 1908 թ., յերբ արդեն դուրս յեկողների թիվը հասավ 508·000-ի և այդպես շարունակվեց մինչև 1914 թ., ապա սոտիճանաբար դուրս յեկողների թիվը պակա-սեց և 1913 թ. հասավ 163·000-ի:

Հետեանքն այն յեղավ, վոր ստոլիոլինյան որենքը վոչ միայն չբարելավեց գյուղացիու-թյան գրությունը, այլ՝ վատացրեց: Վատա-ցրեց այն տեսակետից, վոր գյուղում հողը կենտրոնացավ հարուստ-կուլակի ձեռքը, վորի

Հետևանքով գյուղացիության մնացած միւլ-
իոնավոր մասսան, բացի կալվածատերերի
ձորար լինելուց, գարձավ նու կուտկների
ձորու:

Այդ ոեփորմի հայտարարվելուց իսկու Վլա-
դիմիր Իլյիչ Լենինը գյուղացիությանը բացա-
տրեց նրա իսկական իմաստը: Նա այդ ժամա-
նակ զրեց, վոր «հնի կալվածատիրական բե-
կում կնշանակի համայնքի բոնի կործանում
ու նրա ֆայֆայման արագացում, աղֆատա-
ցած փոքր տնտեսությունների վոչնչացում՝
հոգուտ մի բուռը կուլակների»:

«Ստոլիտինը և կալվածատերը համար-
ձակ կերպով բռնել են հեղափոխական*) ուղի,
անխիղճ կերպով մշրել են չին կարգերը և
գյուղացիական մասսային հանձնել կալվածա-
տերերի և կուլակների հեղեղին ու ավերածու-
թյան»:

Բանվոր դաստկարգի զեկուվար և գյուղա-
ցիության բարեկամ Լենինը այդ ժամանակ

*) Վլադիմիր Իլյիչն այսուեղ «Հեղափոխական ու-
ղի» խոսքը գործ է ածել վոչ թե այն մտքով, թե Ստոլի-
տինն ու կալվածատերը հեղափոխական ուղի յեն բըռ-
նել, այսինքն այնպես ինչպես մենք ենք հասկանում, այլ
այն մտքով, վոր նրանք արմատական բեկումն են կա-
տարում: Հնի ամեն մի նոր բարեփոխումը, վոր կապված
է նրա արմատական փոփոխության հետ, սովորաբար
կոչվում է հեղափոխական:

բացառեց, վոր ստոլիպինյան ուժորմը գյուղացիության շահերի հետ վոչմի առնչություն չունի: Գյուղացիությանը վոչ թե հարկավոր է ստոլիպինյան կուրակային-կալվածատիրական ուժորմ, վորը կիրարկվում է ի հաշիվ գյուղացիության և նրանցից շատերին դեպի աղքատություն տանում, այլ անհրաժեշտ է լրացուցիչ հեղափոխական ուժորմ՝ ի հաշիվ կալվածատերերի, ի հաշիվ նրանց հողերը խլելու:

Յեվ նա այդ ժամանակ տում եր, վոր ստոլիպինյան ուժորմը, ծրագիրը պահանջում է գյուղացիական մասսայի տասնյակ տարիների սիստեմատիկ (նշանակում ե՝ մշտական) ննջում, բոլոր մտածող և ազատ գործելու փորձ անող գյուղացիների սիստեմատիկ ջարդ, սվիններով վոչնչացում, բանտարկություն և տեսոր:

Գյուղացիության սորտակացնող ստոլիպինյան ուժորմի փոխարեն Լենինն առաջարկում էր գյուղացիական ուժորմ. «Գյուղացիական ուժորմ նշանակում է բռնագրավել կալվածատիրական հողերը և այդ ամբողջ հողը տրամադրել գյուղացիությունից դուրս յեկած ազատ ֆերմերության»:

Վրադիմիր Իլյիչն այդ ժամանակ հայտարարեց, «Հարցը պարզ է դրված. կամ՝ համարձակ կոչ գյուղացիական հեղափոխության,

վոր գնալու յե մինչև հանրապետություն, և պրոլետարիատի հետ դաշնակցած այդպիսի հերափոխության համար բոլորանվեր պատրաստություն, կամ՝ համայնքի նկատմամբ ստոլիպինյան-կալվածատիրական հարձակման դեմ՝ անընդառնդակ մարմաջ... անզորություն։ Ընտրեցե՛ք նրանց, ում մոտ տակավին մնացել է քաղաքացիական արիության մի կարիլ և համակրանք դեպի գյուղացիությունը։ Պրոլետարիատն արդեն կատարել է իր ընտրությունը, և սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն այժմ, ավելի քան յերեք, ուժեղ կերպով պիտի բացատրի, պրոպագանդա մղի, մասսաներին՝ գյուղացիության և պրոլետարիատի միասնական ապստամբության լոգունգը տա, վորպես միակ հճարությունը, խանգարելու ստոլիպինի՝ Ռուսաստանի «վերանորոգության» միջոցները։

Ճորտասերերի թագավորը անկուսակցական գյուղացիների յերեսին շպրտել եր, վոր ինքը քույլ չի տա բռնագրավելու կալվածատերերի հողը. քող բանվոր դասակարգը դրան ի պատասխան միլլիոնավոր «անկուսակցական» գյուղացիներին ասի, վոր նա նրանց կոչում է մասսայական պայտարի՝ տապալելու ցարիզմը և բռնագրավելու կալվածատիրական հողերը։

ԻՆՉՊԵՍ ԱՄԲՈԼՁ ԱՇԽԱՐՀԸ ԽԱՌՆՎԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1914 թվին ոկտոբեր համաշխարհային պատերազմը : Այդ պատերազմում իրար դեմ դուրս յեկան Յեվրոպայի՝ յերկու կեսը : Մի կողմից կովում եյին գերմանական, ավստրիական և սածկական կապիտալիստները, իսկ մյուս կողմից՝ անգլիական, Ֆրանսիական և ռուսական կապիտալիստները : Վերջում սրանց միացան յապոնացիք և ամերիկացիք :

Այսպիսով մի կողմին 4 պետություն եր, իսկ մյուս կողմում՝ 10 : Ընդամենը 14 պետություն կովում եյին իրար հետ :

Այդ պատերազմը չորս տարուց ավելի տեղեց : Կապիտալիստները պատերազմի ընթացքում զենքի եյին կաչել մինչև 80 միլիոն մարդկանց, վորոնց մեծ մասն աշխատավոր մարդիկ եյին : Այդ 80 միլիոնից ցարական թուսառանի բաժինը 14 միլիոն եր :

Ինչո՞ւ համար եյին կովում, իրենց արյունը թափում խրամաները քշված տասնյակ միլիոն բանվորներն ու գյուղացիք : Ի՞նչ ունեցին բաժանելու, վոր չեյին բաժանել : Գերմանիայի բանվորն ու գյուղացին թշնամի՝ յեր թուսառանի բավորին ու գյուղացուն :

Ի հարկե, թուսառանի և Գերմանիայի բանվորն ու գյուղացին իրար թշնամի չեյին և

չեցին ել կարող լինել։ Յերկուսն ել բաժանելու
բան չունեցին։ Յերկու կողմն ել ձնշված եր
կապիտալիստներից ու կալվածատերերից։

Ուրեմն 80 միլիոն բանվորներն ու գյուղա-
ցիք դիրքերում կովում եյին վոչ թե իրենց,
այլ ուրիշների շահի համար։

Ո՞ւմ եր պետք իմպերիալիստական պատե-
րազմը։

Պատերազմը հարկավոր և կապիտալիստ-
ներին և կալվածատերերին։ Նրանք իրար մեջ
չեցին բաժանել իրենց հարստությունը։ Նրանք
ոկտեցին պատերազմը, վորովհետեւ զանազան
յերկրների կապիտալիստներն ու կալվածատե-
րերն իրար մեջ բաժանելու բան ունեցին։

Նրանք իշխում եյին միլիոնավոր բանվոր-
ների և գյուղացիների վրա։ Ամբողջ հարրո-
տությունը նրանց ձեռքում եր, հարյուր միլ-
իոնավոր ձեռքեր նրանց համար եյին աշխա-
տում։ Նրանց ձեռքումն եր հողը, իրենց կալ-
վածքներից, ֆաբրիկաներից ու զործարաննե-
րից ողուտ եյին սահնում, վող եյին դիզում
առուտուրից։ Բայց այդ գեռ քիչ եր նրանց
համար։ Նրանք ձգտում եյին մեկը մյուսից
շատ հող խլել, ստրկացնել և ստիպել վոր աշ-
խատավորները նորանոր միլիոններ աշխատեն
նրանց համար։

Խաղաղ ճանապարհով վոչ մի կերպ նրանք
չեցին կարող մեկը մյուսից հարստություն իր-

լել։ Ստիպված եյին պատերազմել։ Յեվ հենց
դրա համար ել սկսվեց իմպերիալիստական
պատերազմը։

Ի հարկե, բանվորներին և գյուղացիներին
նրանք ավտոշկարտ չեյին ասում այդ մասին։
Նրանց ասում եյին, վոր մեզ վրա հարձակվում
է գերմանիան, իսկ զերմանիայի քուրժուտ-
ներն ել իրենց բանվորներին ու գյուղացիներին
եյին ասում թե սուսներն են հարձակվում։
Ասում եյին, թե հայրենիքը վտանգի մեջ է,
աղկալից ժողովրդներին նեղում են, վոր հար-
կավոր ե պաշտպանել հայրենիքը, ճշմարտո-
թյունը և այլն։ Յեվ այդ ստին ու կեղծիքին
վերջ չկար։

Իսկ ճշմարիան այն եր, վոր նրանք պատե-
րազմը սկսել եյին նոր յերկրներ գրավելու,
նոր ոգուաներ ստանալու և իրենց զրադանը լրց-
նելու համար։ Յեվ այդ զրադանի ոգտի համար
աշխատավորներին ուղարկում եյին կովի։
Նրանց սպանում եյին, հաշմանդամ դարձնում,
յերկիրն ավերում։

Ահա թե ինչ կորուս՝ յեղավ համաշխար-
հային պատերազմի բնթացքում։

Սպանված և վիրավոր 28 միլիոն մարդ

Հաշմանդամներ

6 » »

Ծնունդը պակասելուց կորուս 10·500 հա-
զար մարդ։

ԼԵՆԻՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Պատերազմի սկզբին Լենինն ավստրիական
բանտումն եր:

Հեռավոր Կարպատյան լեռներում նա տե-
ղեկացավ, վոր բոլոր յերկրների սոցիալիստ-
ները դավաճանել են բանվորների գործիքները:
Փոխանակ բանվորներին կովի դեմ դուրս բե-
րելու, նրանք կանչում եյին նրանց պատերազ-
մի: Առաջին պահին Լենինը դրան չհավատաց:

Ավստրիայից տեղափոխվելով Շվեյցարիա,
նա անմիջապես սկսում է պատերազմի դեմ
պայքարել:

Սոցիալիստների միջազգային համագու-
մարներում, յուրաքանչյուր բանվորի հետ հան-
դիպելիս, Լենինն ասում եր. «կապիտալիստ-
ների թալանչիական նպատակների համար
բանվորների և գյուղացիների արյունը չպիտի
քափվի: Այս պատերազմն ուրիշ յերկրներ
գրավելու համար է:» Բոլոր յերկրների կապի-
տալիստներն իրենց շահն ավելացնելու համար
էն սկսել այս պատերազմը:

«Աշխատավոր ժողովրդին այս պատերազ-
մը վոչ մի դեպքում կործանումից, սարսափ-
ներից, ավերածությունից և վայրենացումից

բացի ուրիշ բան չի բերում և չի ել կարող
բերել»:

ՅԵՎ ԼԵՆԻՆԸ ցույց եր տալիս յելքը, ասում
եր, վոր հարկավոր ե տապալել բուրժուա-
զիային, վոր բոլոր յերկրներում հարկավոր ե
բանվորների ու գյուղացիների իշխանություն
հաստատել։ Իմպերիալիստական պատերազմի
փոխարեն բուրժուազիայի դեմ պիտի քաղա-
քացիական պատերազմ սկսել։

Նա ասում էր. «Միակ ճշմարիտ լոգունգը՝
իմպերիալիստական պատերազմը ֆաղաքա-
ցիական պատերազմի վերածելն ե»։

ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Չորս տարի պատերազմելուց հետո յերկում սկսեց հայտնվել քայքայում։ Քաղաքների բանվորները քաղցած եյին։ Գյուղացիական տնտեսությունը քայքայվել եր։ Գյուղում ինվենտարը (գործիքները, լծկանները) մաշվել եր, բանվորական ուժը հերիք չեր անում։

Ինչի մասին վոր պատերազմի սկզբում առել և դրել եր Լենինը, ամեն մեկին համոզել, պատերազմի վերջին համարյա թե բոլոր բանվորներն ու գյուղացիք հասկացել եյին։

Որեցոր բանվորների և գյուղացիների համար ավելի և ավելի յեր պարզվում, վոր պատերազմը միայն կապիտալիստներին և կարգածառներին և հարկավոր։ Բանվորներին ու գյուղացիներին կործանումից բացի, պատերազմը վոչինչ չի բերում։ Որեցոր ավելի եր պարզվում, վոր ցարին, կարգածառներին և կապիտալիստներին առպալելուց բացի ուրիշ յելք չկա։

Միապետությանը հասցրվեց առաջին հարցածը։

Փետրվար 27-ին (նոր սոմարով մարտի 12-ին) բանվորները, չտեսնված միաբանու-

թյամբ, զինվորների հետ միասին առաջարկեցին ցարին:

Աւթ որվա ընթացքում չքացավ հարյուրա-
վոր տարիներ ժողովրդին ճնշող միապետու-
թյունը: Այդ բանը այդպես արտգ և հեշտ հա-
ջողվեց, վորովհետեւ ուստ բանվորներն ու
գյուղացիք ունեցին 1905 թվի միասին պայքա-
րի փորձը, վորո ուժերի նախնական փորձ յե-
ղավ:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԻ ՊԱՅՄԱՆԸ ՆՐԱ ԴԵՄ

1917 թվի փետրվարին ապստամբած բանվորները, զինվորներն ու գյուղացիք պայքարել ելին վոչ միայն միապետության դեմ, այլև հաշտության, հացի, հողի և ազատության համար:

Սակայն պրոլետարիատի ապստամբությունից ոգտվեց բուրժուազիան: Նա վոնց վորագում են՝ ուրիշի ձեռքով կրակ եր հանում: Բանվորները, զինվորներն ու գյուղացիք ապստամբելով սապալեցին ցարին, իսկ բուրժուազիան կարվածառերի հետ միասին իշխանությունն իր ձեռքն առավել կազմեց ֆամանակավոր կառավարություն:

Լենինը տեսնում էր, վոր բանվորներն ու գյուղացիք խարված են, վոր այդ կառավարությունը վոչ հաշտություն է տալիս, վոչ հաց, վոչ հող և վոչ ել ազատություն: Նա տում էր, վոր հարկավոր ե այդ կառավարությունն ել սապալել այնպես, ինչպես ցարինը և նրա տեղը հաստատել բանվորություղացիական իշխանություն, իորհուրդների իշխանություն: Միայն բանվորների և գյուղացիների իշխանությունը կապահովի հաշտ-

թյունը, կտա հող և ազատություն։ Յեվ նա
չսխալվեց։

Ժամանակավոր կառավարությունը վոճակիայն պատերազմը չվերջացրեց, այլ սկսեց կազմակերպել «մահվան» վաշտեր։ 1917 թվի հուլիսի համար նա հարձակում եր նշանակել։ Իր հեռագրներով ոտար պետություններին նա հավաստիացնում եր, վոր Թուսաստանը սրբագրվի մինչև «հաղթական» վախճանը։

Այդ որերին Լենինի ձայնն եր, վոր բաց եր անում այդ դավաճանությունը և բանվորներին ու գյուղացիներին կանչում պայքարելու հաշտության համար։ Նա ասում եր, վոր հարկավոր ե իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի, այսինքն կալավածատերերի և կապիտալիստների դեմ պատերազմի։

Լենինը նույնպես պարզ տեսնում եր, վոր յեթե Խորհուրդների իշխանություն չհաստատվի, գյուղացիները հող չեն ստանա։

Ժամանակավոր կառավարությունը, վորի մեծամասնությունը կալվածատերեր և կապիտալիստներ եյին, իր նպատակների համար ողագործում եր մենչևիկներին և եսուերներին։ Նրանց ցուցմունքով մենչևիկներն ու եսուերները հանգստացում եյին ժողովրդին իրենց հեղափոխական խոսքերով, իսկ այդ ժամանակ կալվածատերերն ու կապիտալիստները տակեվանց իրենց գործերն եյին տեսնում և հետաձգում

հողային հարցի լուծումը։ Լենինը պայքարում էր այդ կառավարության գեմ։ Նա բաց էր տնօւմ բանվորների և դյուզացիության տչքերը։ Ահա թե ինչ էր գրում նա այն ժամանակ (Լենինի հոդվածը 1917 թվի հունիսին, «Ինչպես խորեցին դյուզացիներին»)։

«Հայտնի յե, վոր յերբ ամբողջ Ռուսաստանի գյուղացիների պատգամավորները հավաքեցին Պետրոգրադ, գյուղացիական պատգամավորների համառուսական համագումարին, գյուղացիներին խոստացան անմիջապես արգելել հողի առ ֆի ու վաճառքը . . .

«Բայց մեկի անտես ձեռքը խառնվեց այդ գործին և մինիստր Պերեվերգել . . . նորից քույլատրեց հողի առուծախնքի գործարքները։ Գյուղացիությունը հուզվեց։ Յեթե մենք չենք սխալվում, նրանք, ըստ յերկույթին, հատուկ պատգամավորություն ուղարկեցին մինիստրի մոտ։ Գյուղացիներին հանգստացրին, գյուղացիներին համոզեցին, ինչպես համոզում են փոքրիկ յերեխաներին։ Նրանց հավատացրին. վոր անմիջապես հրատարակվելու յե հողի առ ծախսի արգելող որենք, վոր «սիայն» այդ որենքը հրատարակելու համար ե ժամանակավոր կարգադրությունը՝ «հետաձգել»։

... Նաբարը շաբարի հետևից անցավ։

Հուլիսի 28-ին Դումայի խորհրդակցու-

թյուեր կայացավ։ Ծոճյանիկոն¹⁾ խորհրդակցության առաջարկեց «հանձնարարել ժամանակավոր կոմիտեյին հարցը ֆնինել, վորպեսզի առաջն առնվի որենիքի հրատարակության, վորը կործանիչ է վոչ թե մասնավոր հաղատիրության համար, այլ պետության»։

Ահա թե «անտես ձեռքը» յերբ լույս աշխարհ յեկավ։

Գյուղացիներին խաբեցին, անմիջապես չկատարելով այն, ինչ գյուղացիական պատգամավորների համառուսական համագումարում խոստացել էյին անմիջապես կատարել։

Ինչպես խաբեցին գյուղացիներին—խոստումներով կերակրելով։ Ահա դրանում է բուժութուական մինիստրությունների և սոցիալիզմի դավանաների . . . խորամանկ սատանայություններ։

Այդ մինիստրություններում նախկին սոցիալիստները (մենշևիկներն ու եսերները) ծառայում են, վորպես գործիք կապիտալիստների ձեռքում, մասսաներին ֆնացնելու համար։

. . . Ուրեմն թող ամեն մի բանվոր ու զինվոր, հատկապես գյուղացիների համար ուսանելի այդ որինակը բացատրի գյուղացիներին, թե ի՞նչպես ու ինչո՞ւ համար նրանց խաբեցին։

1) Թոճյանկան ու կրայնական խոշոր գործարանատեր եր և ժամանակավոր կառավարության անդամ։

Գյուղացիներն իրենց նպատակներին կարող են հասնել վոչ թե կապիտալիստների, այլ բանվորների հետ դաշինք կնիւնավ»:

Գյուղացիներին խարեցին, վորովհետեւ կալվածատերերը չեյին ցանկանում հողը գյուղացիներին տալ:

Ժամանակավոր կառավարությունը, կալվածատերերի շահերն ապահովելու համար, առում եր, վոր հողերի հանձնելը պիտի լինի կալվածատերերի կամավոր համաձայնությունից հետո: Հողի համար, հոգուտ կալվածատերի, պիտի նշանակել «արդար» փրկարում: Յեթե գյուղացիներն անմիջապես վերցնեն կալվածատերերի հողը, այդ կլինի ինքնագլուխ արարք:

Լենինը տեսնում էր, վոր նրանք ցանկանում են գյուղացիներին, վորոնք 50 տարի շարունակ հողի դիմաց վճարել ենին, սովորել դարձյալ վճարելու:

Յեվ նո գուրու յեկալ զրո զեմ: Գյուղացիական համագումարում տուծ իր ճտոի մեջ նո հայտարարեց.

«Կալվածատերերի ունեցած հողի սեփականությունը յեղել է և կմնա վորպես մի մեծ անարդարություն: Յերե գյուղացին առանց վնարի տիրեն այդ հողերին, այդ ինքնագլուխ արարք չի լինի, այլ կլինի իրավունքի վերականգնում:

«Մենք (այսինքն՝ կոմունիստական կուսակցությունը) ասում ենք, վոր ամբողջ հողը առաց վճարի, տեղական գյուղացիական կոմիտեյի վորոշմամբ պիտի անցնի գյուղացիներին։ Յեթե կալվածատերերը հոգուտ իրենց են հոտաձգում կամ վճար են վերցնում, այդ ե ինքնազլուխ արարքը։ Իսկ յեթե գյուղացիների մեծամասնությունն ասում ե, վոր կալվածատիրական հողերը կալվածատերերի ձեռնում չպիտի մնան, վոր այդ կալվածատերերից, տասնյակ տարիների ընթացքում ննշումից բացի դարեր շարունակ գյուղացիությունը վոչինչ չի տեսել, — այդ ինքնազլուխ արարք չե, այդ իրավունքների վերականգնումն ե, իսկ չի կարելի իրավուքը վերականգնելու համար սպասել»։

Լենին այդ համագումարում ցույց տվավ,
վոր 1905 թվի վիճակագրության համաձայն
30 հազար խոշոր կալվածատերերն ունեին 66
միլիոն դեսյատին հող, այսինքն ամեն մի ծուխ
ուներ 2200 դեսյատինից ավելի, իսկ 10 միլիոն
գյուղացիական ծխերն ունեն 73 միլիոն դեսյա-
տին, այսինքն ամեն մի ծուխ 7 դեսյատին։
Յեզ Լենինը հարցրեց։

— Արդարացի^o յե այդ։ Վո՞չ, արդարացի չե։ «Զեննոտու յե այդ գյուղացիական ազգաբնակության համար։ Վո՞չ, ձեռնոտւ չե։»

Ժամանակավոր կառավարությունը դո-

յություն ունեցավ յոթ ամիս։ Յեվ այդ յոթ
ամսվա ընթացքում կապիտալիստներն ու կալ-
վածատերերը փորձում եյին իշխանությունն
ու տիրապետությունն իրենց ձեռքում պահել։

Սկզբում նրանք փորձում եյին իստում-
ներով այդ անել։ Բայց քանի անցավ, այնքան
նրանք համոզվեցին, վոր դատարկ խոսքերով
փոր չի կշտանա, Գյուղացիք հող են ուզում,
բանվորները՝ կապիտալիստների իշխանության
տապալումը։ Այդ ժամանակ նրանք սկսեցին
զինվորական ուժ պատրաստել, սկսեցին հա-
յածել և բանտ նստեցնել նրանց, վորոնք պայ-
քարում եյին բանվորների և գյուղացիների
շահի համար։ Լենինի գլուխը զնահատել եյին
200.000 ոռոքի վոսկով։ Այդ որերին նա ստիպ-
ված էր թագնվել և պահվել վրանում։

Յեվ պահված տեղից ել նա չեր դա-
դարում բանվորներին ու գյուղացիներին զին-
վելու կանչել։ Նա ասում էր, վոր միայն զին-
վոր—գյուղացու զինված ձեռքը բանվորի հետ
միասին ճշմարիտ յերաշխիք ե, վոր գյուղա-
ցիք հող ստանան, վոր տապալվի կալվածա-
տերերի և կապիտալիստների իշխանությունը։

Յեվ նա զինվորներին կոչ եր անում այդ
նպատակի համար։

«Զինվորների մեծամասնությունը գյուղա-
ցիներից է։ Ամեն մի գյուղացի զիտե, քե կալ-
վածատերերը ինչպես են ննշել և ննշում են

Ժողովրդին։ Իսկ վորո և կալվածատերերի
ուժը—հողը։

«Կալվածատերերը միլիոնավոր դեսյատին
հողեր ունեն։ Դրա համար ել գյուղացիների
միլիոնավոր ընտանիքներին վոչինչ չի մնում,
կալվածատերերի լուծի տակ մտնելուց բացի։

«Վոչ մի «ազատություն» չի ոգնի գյու-
ղացիներին, քանի դեռ կալվածատերերը տա-
նյակ դեսյատիններով հողեր ունեն։

«Իսկ վորպեսզի գյուղացիներն իրենից կա-
րողանան անմիջապես հողը կալվածատերե-
րից խլել և կանոնավոր տնօրինել, պահպանե-
լով կատարյալ կարգ, գույքը փչացնելուց
պահպանել—դրա համար հարկավոր ե, վոր
զինվորներն ոգնեն գյուղացիներին։

«Գյուղացիները, բանվորները և զինվոր-
ները պետության մեջ խոշոր մեծամասնու-
թյուն են։ Այդ մեծամասնությունը ցանկա-
նում ե, վոր ամբողջ հողերն անմիջապես տրվեն
գյուղացիական պատգամավորների խորհուրդ-
ներին։ Վոչ վոք չի կարող խանգարել մեծա-
մասնության, յեթե նա լավ կազմակերպված
լինի (սերտ կապված, միացած), յեթե նա զին-
ված լինի։

«Զինվորներ, ոգնեցեք բոլոր բանվորների
և գյուղացիների միացմանն ու զինվելուն։

«Զինվորներ, ինքներդ ամուր միացեք և
ավելի սերտ կապվեք բանվորների և գյուղա-

ցիների հետ։ Թույլ չտաք, վոր զինված ուժը
խլեն ձեր ձեռքից։

Այն ժամանակ և միայն այն ժամանակ
ժողովուրդն ամբողջ հողը կստանա, ժողո-
վուրդը կազատվի կալվածատերի լուծից։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱԾՐՁՈՒՄԸ

Ապստամբության նախապատրաստական աշխատանքները տանում եր Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն, կազմված բայլշեիլներից, վորոնց ղեկավարում եր Լենինը:

Նոյեմբերի 7-ին (հին տոմարով հոկտեմբերի 25-ին) Պետրոգրադի (Լենինգրադի) բանվորներն ու զինվորները ապստամբվեցին: Ժամանակավոր կառավարությունն ընկավ: Այդ նույն օրը Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն «Թուսաստանի քաղաքացիներին» ուղղած էր կոչով հայտարարեց. «Այն գործը, վորի համար պայմանել ե ժողովուրդը՝ անմիջապես հաշտություն առաջարկել, վերացնել կալվածատերերի սեփականությունը հողերի վերաբերյալ, արտադրության վրա բանվարական հսկողության և Խորհրդային իշխանության ստեղծում—այդ ամենն ապահովված ե»:

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՌԵՑՈՒՆԸ ՀՈԿՏԵՄ- ԲԵՐԻՑ ԱՆՍԻՉԱՊԵՍ ՀԵՏՈ

Հենց հաջորդ որն անմիջապես բոլոր յեր-
կրսների կառավարություններին ուղղվեց դի-
մում՝ արդարացի հաշտություն կնքելու առա-
ջարկով։

Հոկտեմբերյան հեղաշրջման հենց առա-
ջին որն և յեթ վերացավ կարգածատերերի սե-
փականությունը հողից։ Աենինի ցուցմունքով
հրատարակվեց հետեւյալ դեկրետը։

ԴԵԿՐԵՏ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

1. Հողի կալվածատիրական սեփականու-
թյուննի իսպան վերացվում է առանց վորեե
փրկագրման։

2. Կալվածատերերի հողերը, ինչպես և
քագավորի ընտանիքին պատկանող, յեկեղե-
ցական և վաճառապատկան բոլոր հողերն ու կալ-
վածքները, իրենց կենդանին և մեռյալ ինվեն-
տարով, բոլոր շենքերն իրենց սարք ու կար-
գով անցնում են շրջանային հողային կոմիտե-
ների և գյուղացիական ներկայացուցիչների
գավառական խորհուրդների տնօրինության
(մինչև Սահմանադիր Ժողովը)։

3. Բնագրաված գույժի, վոր այսուհետեւ
պատկանում է ամբողջ ժողովրդին, փչացնելը

հայտարարվում է ծանր հանցանիք և պատժվելու յե հեղափոխական դատարանով։

ՅԵՎ այսպես, չնորհիվ ընկեր Լենինի և
բայլշեիկների կուսակցության ուղիղ ղեկա-
վարության, գյուղացիությունը հասավ իր
հնորյա և ամենից թանդ յերազին՝ հողին։
Այժմ մեղանում վերացված է հողի մասնավոր
սեփականությունը։ Հողը չի կարելի գնել,
վաճառել, գրավ դնել և այլն։

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԻՇԽԱ- ՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՅԵՐԿՐԻ ՊԱՅՏ- ՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1917 թվի հոկտեմբերին գյուղացիությու-
նը միացած բանվոր դասակարգի հետ և վերջ-
նիս ղեկավարությամբ տապալեց կապիտա-
լիստներին և կալվածատերերին։ Գյուղացիու-
թյունը հող ստացավ։ Բանվոնրերն ու գյու-
ղացիները վոնդեցին կալվածատերերին և կա-
պիտալիստներին։ Յերիտասարդ Հանրապե-
տությունն իր առաջին որերն եր ապրում։ Բայց
հենց առաջին որերից ել, յերբ հաստատվեց
խորհուրդների իշխանությունը, գեներալներն
ու կուսակին հարձակվել։

Բանվոր դասակարգի և գյուղացիների ա-
ռաջ մի խնդիր դրվեց՝ կամ պաշտպանել իրենց
նվաճումները և կամ հանձնել և նորից լծի տակ
մտնել, հողերը կրկին վերադարձնել կալվա-
ծատերերին և նորից վերականգնել կապիտա-
լիստների իշխանությունը։

Վլադիմիր Իլյիչ Լենինը իր հանճարեղ
խելքով, իր անսահման սիրով դեպի բանվորն
ու գյուղացին տեսավ, վոր հարկավոր և ամ-
բողջ ուժերը լարել, բոլոր հնարավորություն-
ներն ովագործել, Խորհրդային իշխանու-

թյունը զեներայներից պաշտպանելու համար, փրկել յերիտասարդ բանվորա-գյուղացիական հանրապետությունը, բանվորա-գյուղացիական յերիտասարդ Միությունը։ Այդ ծանր որերին Լենինը բանվորա-գյուղացիական Միության գլուխն անցավ։

Բանվորա-գյուղացիական զենքի համար առաջին փորձը փախած կերենսկու հարձակման հետ չպրոելն եր։ Կերենսկուն հաջողվեց ուղմանակատից մի քանի զորամասեր խարելով առաջ քաշել Պետրոգրադի վրա։ Լենինն իր ամբողջ կամքը, միտքն ու ջանքը թափեց այդ հարձակումը հետ մղելու համար։

Ահա թե ինչ է պատմում այդ որերից՝ ընկ Պաղվոյսկին*) Լենինի մասին։

«Լենինը չտեսնված լարվածությամբ եր հետեւում կերենսկու հարձակման։ Նա պահանջում եր մանրամասն զեկուցել. . . Ընկ։ Անտոնովը—Ռվենենկոն**) քարտեղի վրա նրան բացատրում եր ուղմական գործողությունների

*) Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ընկ Պաղվոյսկին Պետրոգրադի Ռազմա-հեղափոխական կոմիտեյի նախագահն եր և զեկավարում եր ապատամբության նախապատրաստական ակադեմիանքները։ Այժմ նա դարձյալ զինվորական աշխատանքի յե։

**) Ընկ։ Անտոնով-Ռվենենկոն Հոկտեմբերյան հեղափոխության որերին Ռազմա-հեղափոխական կոմիտեի քարտուղարն եր։

ընդհանուր ծրագիրը։ Ընկ. Լենինը բացատրությունն եր պահանջում, թե ինչո՛ւ այս կտմայն կետը չի պաշտպանվում, ինչո՛ւ յե այս քայլն արվում և վոչ մի ուրիշը, ինչո՛ւ այս անցքը փակված ե և այլն։ Նրա համար ամենինչ պարզ եր։ Նրա հետ խոսելով յես տեսավոր մի քանի թերություններ ենք կատարել։ այն արտակարգ արագությունն ու թափը չենք հանդես բերել, վորպիսին պահանջում ելին հանգամանքները։ Մենք չեյինք ոգտագործել Պետրովադի (Լենինգրագի) պաշտպանության համար բոլոր ուժերն ու միջոցները»։

Ընկ. Պաղվոյսկին ավելացնում ե.

«Հաջորդ որը ժամը 12-ին Լենինն յեկավ շտաբ՝ ինձ մոտ և պահանջեց, վոր իմ սենյակում իրեն համար սեղան դնենք։ Նա հայտնեց, վոր ուզում ե Դիրքերին լավ տեղյակ լինել և ավելացրեց, վոր Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշել ե իրեն, Ստալինին և Տրոյկուն ինձ ողնության ուղարկել։ Աստիճանաբար ինքն ել չնկատելով նա սկսեց անմիջական կարգադրություններ անել մեկ սրան, մեկ նրան։ Աշխատանքը յեռաց, իսկ Լենինին թվում եր, թե նա ելի բավականաչափ արագ չի գնում։

«Մյուս որը յես գնահատեցի Լենինի աշխատանքի ամբողջ նշանակությունը։ Յես հակացա, թե վորն ե Լենինի ուժը։ Մենք ցըված ելինք աշխատում, մեր ուժերը հավաքում ե

կովի եյին ուղարկում առանց ծրագրի, վորի
հետևանքն եր լինում գործողությունների
ցրվածություն։ Մասսաները չեյին զգում յեր-
կաթե կամք ու ծրագիր, վորով ամեն բան իւ
տեղում եր, իրար կպած և միահամուռ։

«Լենինը կարծես թե ամեն մեկի գլխում
ժեխում եր այն միտքը, թե հարկավոր ե ամեն
ինչ կենտրոնացնել պաշտպանության համար,
ամեն ինչ տալ պաշտպանության»։

Կերենսկու հարձակումը հետ շպրտվեց,
բայց դրան հաջորդեցին նոր հարձակումներ։
Ծանր և պատասխանառու յեր մանավանդ 1918
թիվը։

ԻՆՉՊԵՍ ՆԱՀԱՆՁԵՅ ԼԵՆԻՆԸ, ՀԱՆԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1918 թիվ։ Բոլորն ել հոգնել եյին 4 տարի
առաջ իմպերիալիստական պատերազմից։ Զին-
վորները սազմաճակատից տուն եյին դառնում։
Ցարական բանակն ամբողջովին քայքայվել եր։

Գյուղացիները պաղված եյին շատ սպա-
ռած և վերջապես ստացած հողով։ Իսկ այդ
ժամանակ գերմանական կապիտալիստները
հարձակվում եյին Խորհրդային Ռուսաստանի
վրա։ Գերմանական զորքերը, գերմանական
բանկիրների և կալվածատերերի հրամանով,
գրավել եյին Ռուսայնան և արշավում եյին
Պետրոգրադի վրա։

Այդ որերին սխալվելը հեշտ եր։

Յեվ Լենինն այստեղ ել ճանապարհը ճիշտ
դժեց։

Նա նահանջեց, վորպեսզի հաղթի։ Ի՞նչն
ոգնեց Լենինին ուղիղ ճանապարհ վերցնելիս։
միայն անսահման սերն աշխատավորների հան-
դեպ։ Նա մի ընկերոջ ասում եր, վոր «լավ հե-
ղափոխականների կուսակցությունը չի կարող
պատերազմ վարել, պատերազմը գյուղացին
պիտի տանի»։

— Մի՞քեն դուք չեք տեսնում, վոր գյուղացին պատերազմի դեմ ե քվեարկել, — Հարցրեց ինձ Լենինը*).

— Ներողություն, վոնց քե քվեարկել . . .

— Վոսքերով ե քվեարկել, ոազմանակատից փախել ե . . .

Զնայած վոր նույնիսկ կուսակցության կենտրոնական կոմիտեյում մի ժամանակ Լենինը փոքրամասնություն կազմեց, բայց և այնպես Լենինի առաջարկով Բրեստի հաշտությունը կնքվեց և Խորհրդային Թուստոտանը չխորտակվեց :

Այժմ պարզ ե մեզ համար, վոր այդ միակ ձշմարիտ ուղին եր: Լենինը թշնամուն վորուարածություն զիջեց, վորպեսզի ամրապնդվի և հետո հարձակվի:

Լենինը իրավացի դուրս յեկավ: Գերմանական զորամասերը քայքայվեցին, սկսեցին հետզնու դեպի Գերմանիա: Յեղավ զինադադար:

Իսկ այդ ժամանակ իլիիչը դեկավարում եր կարմիր բանակի կազմակերպման գործը: Հրատարակում ե դեկրետ բանակի կազմակերպության մասին: Կամաց-կամաց կազմակերպում են կարմիր-գվարդիականներից և կամա-

*) Այս խոսակցությունը Լենինը ունեցել է ընկերագեկի հետ:

վորներից գնդեր։ Կարմիր բանակն աճում է զորանում է։

Լենինը տեսնում էր այդ աճումը։ Նա համոզված էր, վոր ուղիղ և այն ճամապարհը, վորով տանում էր Խորհրդային պետությունը։ Յեվ նույնիսկ ամենածանր ըոպեներին նրա համոզումը չսասանեց։ Այդ ըոպեներին նա պողպատյա ամուր կամքով սրտապնդում էր ժյուսներին։ Այսպես որինակ Յուդենիչի և Դենիկինի հարձակման ժամանակ նա գրում էր.

«Ընկեր կարմիր բանակայիննե՛ր. Ցարական գեներալները՝ Յուդենիչը հյուսիսում, Դենիկինը՝ հարավում նորից լարում են իրենց ուժերը, վորպեսզի հաղթեն խորհրդային իշխանության, վորպեսզի վերականգնեն ցարի, կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը։

«Մենք գիտենք, թե ինչպես վերջացավ կոլչակի նմանորինակ փորձը։ Ուրալի բանվորներին ու Սիբիրի գյուղացիներին նա շատ ժամանակ չխարեց։ Տեսնելով նրա խարերայությունները, անսահման հալածանեցներ ու ծեծկրելով, կապիտալիստների և կալվածատերերի զավակ սպաներից քալան ու կողոպուտ տեսնելով, Ուրալի բանվորներն ու Սիբիրի գյուղացիները ոգնեցին կարմիր բանակին՝ Կոլչակին ջարդելու համար։ Որենքուրզի կուգակներն անցել են խորհրդային իշխանության կողմը։

«Ահա թե ինչու մենք հաստատ համոզված ենք, վոր հաղթելու ենք Յուդենիչին և Դենիկինին։ Նրանց չի հաջողվի ցարական և կալվածատիրական իշխանությունը վերականգնելու։ Այդ չի լինելու։ Դենիկինի թիկունիւմ գյուղացիներն արդեն ապստամբվել են։ Կովկասում Դենիկինի դեմ ապստամբությունը վառվում է պայծառ կրակով, կուբանի կազակները տրտնջում են և հուզվում, դժգոհելով դենիկինյան բռունցքներից ու թալանից՝ հոգուտ կալվածատերերի ու անգլիացիների։

«Լինենք անսասան, ընկեր կարմիր բանակայիններ, բանվորներն ու գյուղացիները Ե՛ւ ավելի միահամուռ, Ե՛ւ ավելի գիտակցաբար և ավելի վճռական անցնում են Խորհրդային իշխանության կողմը։

«Հառաջ, ընկեր կարմիր բանակայիններ, պատերազմ մղելու բանվորա-գյուղացիական իշխանության համար ցարական զենքալների դեմ։ Հաղթանակը մերն ե։

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԼԵՆԻՆԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՄՈՏԵՆԱԼ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ

Դեռ 1901 թվից Լենինը ուսուցանում էր, վոր գյուղացիությունը միայն բանվոր դասակարգի հետ դաշինք կապելով հող և ազատություն կստանա:

1905 թվին նրա սերտ մասնակցությամբ բանվորներն ու գյուղացիներն առաջին միատեղ քայլերն արին:

1917 թվին գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ դաշինք կապած և Լենինի անմիջական ղեկավարությամբ հաստատեց խորհրդային իշխանություն և գրավեց հողը:

Քաղաքացիական կովի տարիներում գյուղացիությունը՝ ղեկավարությամբ բանվոր դասակարգի, վորին առաջնորդում եր Լենինը, հազար զրկանքներ կրելով պաշտպանեց իր իրավունքը հողի նկատմամբ:

Բայց բանվորի և գյուղացու դաշինքին Լենինը մոտենում էր վոչ միայն վորպես զինվորական դաշինքի՝ կալվածատեցերի և կապիտալիստների զեմ պայքարելու, նա ասում էր, վոր պիտի լինի նաև տնտեսական դաշինք: Վլադիմիր Իլյիչն ուսուցանում էր այն մասին, վոր բանվոր դասակարգը պիտի հաշվի առնի գյուղացիության վիճակը: Բանվոր դասակար-

գը պիտի մոտենա նրան զգուշաբար և գիտակցված։ «Միջակ գյուղացիության տնտեսական փոխարարերությունների ասպարիգում բռնություն գործադրելու մտքից ավելի հիմարը չկա:

«Յեթե ասված ե, վոր հարկավոր ե կամավոր համաձայնությունն առնել, ուրեմն հարկավոր ե գյուղացիներին համոզել և համոզել գործնականությունը կամ խոսքը չեն համոզվի և լավ ել կանեն, վոր չհամոզվեն»։

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարը,
բանվորների և գյուղացիների դաշտնքի ստեղծողը՝ **Վլադիմիր Իլյիչ Լենինը ղեռ այն որերում, յերբ քաղաքացիական կովկի յեռուն ժամանակն եր, յերբ հարկավոր եր բոլոր ուժերը լարել սպիտակ գվարդիականներին հետ քշելու, Լենինն ասում եր, վոր մեր հերթական հաջորդ անելիքը գյուղացիների վիճակը բարելավելն է։ «Բուրժուազիային ննշելու խընդիրից հետո մեզ անհրաժեշտ է մեր ուշադրությունն ընթառական միջակա գյուղացիների գործադրունը բարելավելու մասին»։**

Այդ որերին Լենինը չեր մոռանում միլիոնավոր գյուղացիների գործադրունը բարելավելու մասին։

Յեվնա բանվորների առաջ խնդիր եր գրեւմիջակ ուսուուղու հետ կամամոր ուսուիրի համաձայնությունը ձեռք բերել։ Ահա թե

ինչ եր ասում նա միջակ գյուղացիության
հանդեպ ունեցած վերտքերմունքի մասին:

«Յերբորդ խումբը՝ միջակ գյուղացիներն
են—նրանք ևորհրդային իշխանության քշնա-
միներ չեն: Նրանք կարող են այդ իշխանու-
թյան բարեկամները լինել, մենք ձգտում ենք
դրան և կհասնենք:

«Սոցիալիզմի բոլոր ուսուցիչներն ել ըն-
դունում եյին, վոր բանվորները պիտի տա-
պալեն կապիտալիստներին և կալվածատերե-
րին, վորպեսզի իրականացնեն սոցիալիզմը,
բայց միջակ գյուղացիության հետ հնարավոր
և համաձայնություն կնվել և այդ անհրա-
ժեշտ ե» (1919թ.):

**Յեվ Վլադիմիր Իլյիչ Լենինը գեռ իր կեն-
դանության որոք պրոլետարիատին տարավ
համաձայնության, բանվորների ոնտեսական
դաշինքին գյուղացիության հետ: Այդ բանն
նա արեց, առաջադրելով Նոր Տնտեսական Քո-
ղոքականությունը:**

ԳՅՈՒՂԱՅԻՌՅՈՒՆԸ ՅԵՎ ԳԱՂԱՔՍՅԻԱԿԱՆ ԿՐՎԻ ՇԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային Ծուսաստանի բանվորներն ու
գյուղացիները յերեք տարուց ավելի ստիպված
յեղան տանել քաղաքացիական կռիվը։ Հինգ
ու կես միլիոն, մեծ մասամբ գյուղացիներ,
զենքի տակ եյին։

Այդ հինգ ու կես միլիոնին հարկավոր եր
կերակրել, հազցնել, զինել, Ծուսաստանի մե-
ծայրից մյուսը հազարավոր վերստեր տեղա-
փոխել, հյուսիսային ճակատից հարավոյինը,
արևելյանից՝ արևմտյանը։

Այն ինչ տրանսպորտն ավերված ու քայ-
րայված եր։

Ավելի մեծ շրջանները՝ Սիբիրը, Ուկրայ-
նան կտրված եյին։

Բանվորների և գյուղացիների առաջ ամ-
բողջ ժամանակ մի խնդիր կար՝ կամ կարմիր
բանակի պարենավորման գործը կազմակերպել
և հետ մղել թշնամուն և կամ իշխանությունը
հանձնել, հողերը հետ տալ և գնալ կալվածա-
տերերի ու կապիտալիստների լծի տակ մտնել։

Սպասել կամ դանդաղել չեր կարելի։

Խորհրդային իշխանությունը, Լենինի գլո-
խավորությամբ մոցնում և պարենամասնա-

տրում, բոլոր գործարաններն ու Փաքրիկաներն ուղազմական գործին ծառայեցնելով։

Լենինը տեսնում էր, վոր գյուղացիության համար դժվար է, վոր նա դժգոհ է։

«Մեզանում այդ ուժը, այսինքն գյուղացիությունը տատանվում է, ամենից շատ նայե հոգնել։ Նրա վրա յե ընկած հեղափոխության ծանրությունը, իսկ վերջին ժամանակնոր ծանրություններ են իջնում նրա գըլխին՝ անքերրի տարին, մասնաւրում կատարելը, կերի պակասի պատճառով անասունների կոտորվելը և այլն։ Նա չեր կարող մտածել իր դրությունը բարելավելու մասին, քեկուզ կալվածատերերին վերացնելու որից յերեք տարի չե անցել»։ (Կուսակցության 1921թ. Համագումարում արտասանած ճառից)։ Սակայն նա վճռական ձեռվ դեկավարում էր Խորհրդային Ռուսաստանի պաշտպանության գործը։ Նա դիտեր, վոր այդ ժամանակամիջոցն անհրաժեշտ էր։ Միայն կապիտալիստներին և կալվածատերերին անձնատուր լինելով էր Հնարավոր ազատվելնրանից։ Իսկ այդ նշանակում էր, վոր գյուղացիները նորից պիտի մնային ձնշված և հողագուրկ։ Յեվ Լենինը ասում էր. «Մենք գյուղացիներից վերցնում ենք ավելցուկը և նույնիսկ վոչ քե ավելցուկը, այլ գյուղացու համար անհոաժեց պառենի մի մասը։ Վեոգրանում ենք բանակի և բանվորների պահպանու-

թյան ծախքերը հոգալու։ Այլ կերպ մանր գյուղացիական յերկրում մենք չենք կարող հաղթել կալվածատերերին և կապիտալիստներին»։
 («Պարենհարկի մասին» գրքույկեց)։

«Մինչև այժմ մենք ապրել ենք չտեսնված ծանր պատերազմի պայմաններում, յերբ զինվորական կերպի գործողություններից բացի, տնտեսական ասպարիզում մեզ վոչինչ չեր մնացել։ Յեզ հրաշք եր, վոր ավերված յերկիրը դիմացավ այդպիսի պատերազմին, և այդ հրաշքը յերկներից չընկավ, այլ վեր յելավ բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական շահերից, բանվոր դասակարգի և գյուղացիության, վորոնք իրենց մասայական վոգեվորությամբ ստեղծեցին այդ հրաշքը։ Այդ հրաշքով ստեղծվեց կալվածատերերի և կապիտալիստների հետ վանումը (ՌԿԿ Համագումարին արած զեկուցումից)։

ՊԱՅՖԱՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ ԴԵՊԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱ- ԾԻՆՔ, ԴԵՊԻ ԶՈԴՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

**ԻՆՉՊԵՍ ԵՐ ԼԵՆԻՆԸ ԴԱՐՁ ԱՆՈՒՄ ԿԱՄ ԱՆ-
ՅՈՒՄ ԿԱՏԱՐՈՒՄ ԴԵՊԻ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1920-21 թվականներին կարիքը ծայր տո-
տիմանի հասավ։ Գյուղացիական տնտեսու-
թյունը չլոված քայլքայման եր յենթարկվել։
Գյուղացիական մասսաները հուղված եյին, գժ-
գոհություն կար պարենմասնառումից։ Ամե-
նից դիմացկուն և առաջավոր գյուղացիները
կասկածի մեջ եյին, բայց այդ ժամանակ բան-
վորներն ու գյուղացիները, Լենինի ղեկավա-
րությամբ, առաջադրված խնդիրը լուծել ե-
յին։ Սպիտակ զվարդիականները ջարդվել ե-
յին, քաղաքացիական պատերազմը վերջացել
եր։ Գյուղացիության ձեռքում հաստատ գրա-
վական կար, վոր եւ ցար ու կոլլածտեր
չի լինելու։

Հնարավոր դարձավ, ինչպես Լենինն եր տուժ
կենտրոնացնել տնտեսական դրության վրա։

Հնարավոր դարձավ ուշադրությունը
1919 թվին, «Բուրժուազիային ննշելու խնդրից

մեր ուշադրությունը դարձնել միջակ գյուղացիության կյանքը բարելավելու խնդրի վրա»:

Յեվ Լենինը, քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո անմիջապես անցման ազդանքանը տվավ։ Ահա թե ինչ եր գրում։ «Տազմական կոմունիզմը ստիպողական եր պատերազմի և ավերածության պատճառով։ Նա համապատասխան չեր և չեր ել կարող լինել պրոլետարիատի ժաղաքականության խնդիրներին։ Նա ժամանակավոր միջոց եր։ Եր դիկտատուրան մանր բուրժուական յերկրում իրագործող պրոլետարիատի նշմարիտ ժաղաքականությունը գյուղացիներին հարկավոր արդյունաբերության ապրանքների փոխանակությունն է հացի հետ։ Պարենիարկը անցնում է դեպի այդ ժաղաքականությանը»։

Այդ անցումը նո անվանեց «Նոր Տնտեսական Քաղաքականություն»։

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԵՐ ՊԵՏՖ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Տնտեսական Քաղաքականությունը մտցնելով, Վլազիմիր Իլյիչը խնդիր եր դրե՛րանվորների և գյուղացիների միջև տնտեսական սերտ կապ հաստատել, Խորհուրդների իշխանությունն ամրացնելու համար։

«Պետական իշխանությունը մեր ձեռքումն է, մենիք ունենիք տնտեսական շատ միջոցներ։ Յեթե մենիք զարդենիք կապիտալիզմը և գյուղացիական տնտեսության հետ շաղկապ ստեղծենիք, այն ժամանակ մենիք բացարձակ անհաղթելի ուժ կդառնանի»։ (II Համագումարի դեկուցումից)։

Այստեղ եւ Լենինը մտածում եր միլիոնավոր գյուղացիների դրությունը լավացնելու։ Նա ասում եր, վոր բանվոր դասակարգը չի կարող և չպիտի կտրվի գյուղացիական մասսաներից։ Նա ասում եր, վոր բանվոր դասակարգը լսում ե իր պայքարի դաշնակցին՝ գյուղացիությանը, հոգատար ե նրա կարիքների և պահանջների հանգեց։ Բանվոր դասակարգը պիտի գյուղացիության իր կողմը քաշի։

«Ամենից արմատական, ամենից կարևոր հարցը, այդ բանվոր դասակարգի վերաբերմունքն ե գյուղացիության հանդեպ, այդ բան-

վոր դասակարգի դաշինքն է գյուղացիության հետ, այդ առաջավոր բանվորների, վորոնի անցել են խոշոր ֆաքրիկի ծանր և դժվարին, սակայն յերախտավոր դպրոցը, այդպիսի բանվորների գիտենալն է զործն այնպես դնել, վորպես զի իրենց կողմը բաշեն գյուղացիական մասսային»:

Այդ դաշինքի եյությունն այն է, ինչպես սպած է Հենինի վերև բերված խոսքերում, վոր հաջողվի կանոնավոր և գյուղացիության համար միանգամայն գոհացուցիչ փոխանակություն ստեղծել գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրած ապրանքների միջև։

Բանվոր դասակարգին վիճակը ընկած խընդիրներից ամենից դժվարն ու կարեորը՝ գյուղացիության հետ տնտեսական կապ ստեղծելն է։ Այդ խնդիրը, ասում է Հենինը, մենք մի տարում և վոչ ել յերկու տարում չենք կարող վեճուել։ Այդ խնդիրը հնարավոր է լուծել մի ամբողջ ժամանակաշրջանում, վորին Թլյիչն անվանում եր «Նոր Տնտեսական Քաղաքականություն»։

Հենինը շատ անգամ, իր կյանքի վերջին տարիներում կրկնում եր, վոր այդ գործը նոր է ու դժվար, վոր հնարավոր են սխալներ, բայց առ ինուիռ մենք հասեասե, ենք, ոռեւ, ենք և կվճռենք։ Ամենից կարեւո՞ն է՝ բանվորների և

**գյուղացիների իշխանությունը անհաղթելի ուժ
դարձնել:**

«Մենք արդեն սովորել ենք և պարծենում
ենք, թե ինչպես է հարկավոր տապալել բուր-
ժուազիային և ննշել նրան։ Բայց մենք չեն սո-
վորել, թե ինչպես է հարկավոր կանոնավորել
միլիոնավոր գյուղացիության հետ հարաբե-
րությունները։ Այդ մասին պարզ պիտի ասել,
բայց մենք խնդիրը հասկացել ու դրել ենք։ Յեզ
մենք ամբողջ հույսով, գիտակցությամբ ու
վճականությամբ ասում ենք, վոր այդ խըն-
դիրն ել կլուծենք և այն ժամանակ սոցիալիզմն
անհաղթելի կլինի»։ **Այդ խնդիրը Լենինը դրել է
Նոր Տնտեսական Քաղաքականության առաջ։**

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԻՏԻ ՀԻՄՆՎԻ ԲԱՆ- ՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական կապի կարգավորման, բան-
վորների և գյուղացիների տնտեսական դաշին-
քին անցնելը սկսվեց պարենհարկը մտցնելու
որից :

Պարենհարկի ժամանակ գյուղացիները
բանակի կարիքների համար Խորհրդային իշ-
խանությանն ելին հանձում իրենց ապրանքնե-
րի միայն մի մասը։ Ապրանքների մնացած շատ
մասը մնում եր գյուղացու ձեռքում։ Այդ մը-
նացածով գյուղացին թե ընտանիքն եր պահում
և թե իր տնտեսությունը վերականգնում։

Իսկ յե՞րբ կարող ե գյուղացին իր ավել-
ցուկը գործադրել ընտանիքի պահպանման և
տնտեսությունը բարեկարգելու համար։ Մե-
այն այն ժամանակ, յերբ նա կարողանա յեղած
ավելցուկը վաճառել և նրա փոխարեն՝ ձեռք
բերել անհրաժեշտ ապրանքներ։

Այժմ գյուղացին շուկայում ե կատարում
ու ու ծախսը։ Գյուղացին ցորենի և այլ ապ-
րանքների ավելցուկը տանում ե շուկա, իսկ
բանվորն ել պետական առետրական հիմնարկ-
ների միջոցով վաճառքի յե հանում արդյունա-
լերության ապրանքները։

Բանվորի և գյուղացու միջև փոխանակությունը կատարվում է առետրի հունով: «Առետուրն այժմ միակ հնարավոր շաղկապն է պրոլետարիատի առաջավոր մասի և գյուղացիության միջև, միակ հնարավոր կապը, վորպես զի ընդհանուր նակատով սկսվի վերելքը» (Խենինի ասածը II Համագումարում):

Բայց շուկայի և ազատ առետրի հետ թույլատրվում է և մասնավոր կապիտալը. մասնավոր առետրականը, վաճառականն ու տնայնագործը:

Այսպիսով, շուկայում պետական և մասնավոր կապիտալը պայքարում են: Կոիվը նրա համար ե, թե ո՞վ պիտի գյուղացուն արդյունաբերության ապրանքներ վաճառի՝ Խորհրդային պետությունը, թե մասնավոր առետրականը:

Յեթե պետական արդյունաբերությունը առաջնություն տանի, այն ժամանակ բանվորների և գյուղացիների միությունը կաճի և կամրանա Խորհրդային իշխանությունը: Յեթե մասնավոր առետրականը հզորանա, այն ժամանակ բանվորների և գյուղացիների միջև տատիճանաբար կառաջանա ընդհատում և անջատում, Խորհրդային իշխանությունը կթուրանա:

«Բանվորների և գյուղացիների շաղկապը տիտի հոգածածածաւ մասնաւոռ կառիւտուի հսկների դեմ մղված պայքարի պայմաններում,

մրցման միջոցով աստիճանաբար կապիտալիստին հետ մղելու նաևապարհով։

«Ուղղակի, կոմունիստական քաշխում մենք չկարողացանք մտցնել։ Դրա համար չկային սարք ու կարգով գործարաններ։ Ուստի մենք սկիտի առևտուրի միջոցով տանք և տանք կապիտալիստից վոչ վատ»։

ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Ե ՎՈՉ ԹԵ ՀԱՐՍՏԱՆԱԼ, ԱՅՀ ԲԱՎԱՐԱՐԵԼ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Խորհրդային իշխանությունը բանվորների
ու գյուղացիների իշխանություն է։ Նա չի կա-
րող իրեն նպատակ դնել հարստահարելով գյու-
ղացիներին հարստանալ։ Լենինն ասում էր,
վոր Խորհրդային իշխանության նպատակն է
տնտեսական շաղկապ ստեղծել, բարելավել
գյուղացիների դրությունը։

«Մեր նպատակն է,—ասում եր Լենինը,—
կապիտալիստի հասարակ գործակատարի հետ
ունեցած մրցումը տանել։

«Կապիտալիստները գյուղացիության հետ
ստեղծում են տնտեսական շաղկապ, վորպես-
զի հարստանան, իսկ մենք պիտի գյուղացիա-
կան տնտեսության հետ շաղկապ ստեղծենք,
վորպեսզի մեր պետության կազմ ավելի ու-
ժեղանա։

«Իսկ դրա համար,---ասում եր նա—պրո-
լետարական պետությունը պիտի դառնա րզ-
գույշ, շնորհալի և կարող «տնտես», նշտապահ
մեծածախս վաճառական։ Այլ կերպ նա չի կա-
րող մանր գյուղացիական յերկիրը վոտքի
կանգնեցնել, այլ անցում դեպի կոմունիզմ-
ներկա պայմաններում, կապիտալիստական
(առաջմ դեռ կապիտալիստական) Արևմուտ-

քի կողին-չկա» («Հոկտեմբերյան հեղափոխության 4-րդ տարեդարձը» հոդվածից) :

Բանվոր դասակարգի և նրա ղեկավար Կոմունիստական կուսակցության համար առետուրի կազմակերպումը նոր գործ է։ Մենք ստիպված ենք սովորել։ Լենինը շատ անդամ է տու, թե գիտության համար ափսոս չի վճարել։ Այդ կարևոր հարցում, առետրի խնդրում, ասում եր նա, սխալներ հնարավոր են։ «Բայց մենք այդ սխալները պիտի ուղղենք, մինչև վոր սովորենք մրցել հասարակ գործակատարի, հասարակ կապիտալիստի հետ, վորք կգնա գյուղացու մոտ և նրա հետ չի վիճի կոմունայի մասին. . .» (II Համագումարի զեկուցումից)։ Քայլ առ քայլ, ասում եր Լենինը, մենք պիտի հասնենք այն դրության, վորպեսզի մասնավոր կապիտալիստից ավելի աժան և ավելի լավ ապրանքներ տանք գյուղին։

Աստիճանաբար դուրս անելով նրան գյուղից, ազգաբնակչության մեջ կոռպերատիվ կազմակերպություններ ստեղծելով։ «Գյուղացին քաղաքի արդյունաբերության կարիքն ըգգում է, առանց նրան նա չի կարող ապրել, իսկ այդ արդյունաբերությունը մեր ձեռնումն է։ Յեթ այդ գործը մենք ուղիղ տանենք, գյուղացին մեզնից շնորհակալ կլինի, վոր մենք այդ ապրանքներն ու գործիքները, այդ կուլտուրան և անում ենք նրա մոտ։ Վոչ թե շահագործող-

**ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱ-
ՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎՃՌՈՒՄ ԵՄԵՐ ՀԵՂԱ-
ՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱԽՏԸ**

Բանվորների և գյուղացիների շաղկապի և
միության խնդիրը կարմիր թելի նման անց-
նում է Լենինի ամբողջ կյանքով։ Այդ բանին և
նվիրել նա և իր վերջին խոսքը։

Իր ծանր հիվանդության ժամանակ Լե-
նինը գրել է յերկու վերջին հոդված։ «Լավ է
քիչ, բայց լավ» և «Կոռպերացիայի մասին»։

Այդ յերկու հոդվածներում ընկեր Լենինը
կուսակցության և Ռուսաստանի բանվոր դա-
սակարգին կտակել է, թե ինչպես պիտի փոխ-
հարաբերություն ստեղծել գյուղացիության
հետ։ Մենք, ասում են նա, ամբողջ աշխարհում
միակ բանվորագյուղացիական իշխանու-
թյունն ենք։

Ուրիշ յերկրներում կապիտալիստներն են
թագավորում։ Այնտեղ բանվորն ու գյուղացին
դեռ ճնշված են։ Նրանք դեռ չեն հաղթել, սա-
կայն նրանց պայքարը ծավալվում է և աճում։
Յեվ Լենինն ասում եր, վոր վաղ թե ուշ նրանց
պայքարը հաղթանակով է վերջանալու։

«Անսովոր արագությամբ վերջին տարինե-
րում ազգաբնակչության մեծամասնությունը
մասնակցում եր իր ազատագրական պայքարին,

այնպես վոր կասկածանքների ստվեր անգամ չի կարող լինել այն մասին, թե ինչպես պիտի լինի համաշխարհային պայքարի վերջնական վընիռը։ Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակն անպայման և լիովին ապահովված ե» («Լավ ե քիչ, բայց լավ» հոդվածից)։

Բայց առայժմ այնտեղ չկա բանվորների ու գյուղացիների հաղթանակը։ Այնտեղ դեռ իշխում ե կապիտալը։ Յեզ մինչ այն մենք չենք կարող Արևմուտքի բանվորների կողմից տընտեսական ոգնություն սպասել։ Ի հարկե, յերբ նրանք հաղթեն, մեզ կարող են մեքենաներ տալ մեր հում նյութերի դիմաց։ Մենք ստիպված ենք ապրել մեր, առայժմ աղքատիկ, պայմաններում։

Մեզ հարկավոր ե դիմանալ, մինչ այլ յերկրներում հեղափոխություն սկսվի։

Իսկ ի՞նչպես կարող ենք դիմանալ, յե՞րբ կարող ենք Խորհուրդների իշխանությունն ամրացնել այնքան, վոր մեզ չկարողանան ճնշել։

Միայն այն ժամանակ—ասում եր լենինը—յերբ մենք կկառուցենք բանվորների ու գյուղացիների միությունը, միայն այն ժամանակ, յերբ մենք միւսինավոր գյուղացիների վստահությունը կպահպանենք և կղեկավարենք նրանց։

«Մենք պիտի այնպիսի քաղաքականություն վարենք կամ մեր փրկության համար

հետևյալ քաղաքականությունն ընդունենք։ Մենք պիտի ջանանք կառուցել այնպիսի պետություն, վորի մեջ բանվորները պահեն դեկավարությունը գյուղացիների վրա, ունենային գյուղացիների վստահությունը և ծայրահեղ տնտեսումով իրենց հասարակական հարաբերություններից դեն նետեյին ավելորդության հետքն անգամ»։

Իսկ ի՞նչպես Խորհրդային պետությունն ու բանվոր դասակարգը ձեռք պիտի բերեն գյուղացիական մասսաների վստահությունը։

Նրանք, ասում եր Լենինը դեռ կուսակցության Ա-ըդ Համագումարում, պիտի վոչ թե խոսքով, այլ գործով ստեղծեն այդ շաղկապը, վորպեսզի ամենից հետոյաւ գյուղացին զգաբարելավումը, հասկանա այն կապը, վոր կա ի՞շահերի և այն բարձր նպատակների իրազործման միջև, վորին մենք ձգտում ենք։

«Պիտի ցույց տալ այդ շաղկապը, վորպեսզի մենք պարզ տեսնենք, վորպեսզի ամբողջ ժողովուրդը տեսնի, վորպեսզի գյուղացիակ հոծմասսան տեսնի, վոր իր ծանր, չտեսնված ձեռնով քայլայված, չլսված աղքատ և տածանելի կյանքի և այն աշխատանքի միջև, վոր հանուն սոցիալիստական հեռավոր գաղափարների տանում են կոմունիստները, այժմ կապ կա։ Պիտի այնպես անել, վերպեսզի հասարակ շարքային աշխատավոր մարդն ել հասկանա,

Վոր ինիքը մի բարելավում ստացել է և այդ բարելավումը ստացել է վոչ թե այնպես, ինչպես գյուղացիներից քչերը ստանում եյին կալվածատիրական իշխանության և կապիտալիզմի որով, յերբ բարելավման ամեն մի բյալը (անկասկած բարելավումներ յեղել են և շատ խոշոր) հին հասարակակարգում կապված էր ծաղրի, հիշոցի և ծանակի հետ գյուղացու հանդեպ մասսաների վրա կատարած բռնության հետ, վորը գյուղացիներից և վոչ մեկը չի մոռացել և տասնյակ տարիներ ել չի մոռացվի Ռուսաստանում։ Մեր նպատակն է վերականգնել շաղկապը, ցույց տալ գյուղացուն, վոր մենք ըսկում ենք նրանից, ինչ վոր հասկանալի յենրան, ծանոթ են հենց այժմ, նրա աղքատության ժամանակ մատչելի, և վոչ թե գյուղացու տեսակետից ինչ վոր հեռավորից ու յերկայականից։ Մեր նպատակն է, հենց ցույց տալ, վոր մենք կարող ենք նրան ոգնել, վոր կումունիստները, մանր գյուղացուն՝ նրա ծանր, ավերված, աղքատ և տանջալի բաղցած վիճակում հենց այժմ ոգնում են գործով։ Հարկավոր է գյուղացիական մասսայի հետ, շարժային աշխատավոր գյուղացու հետ սերտ կապվել և սկսել առաջ շարժվել անչափ դանդաղ, ավելի դանդաղ, բան մենք յերազում ենք, բայց և այնպես, վոր իրով մասսան ել շարժվի մեզ հետ։ Այն դեպքում այդ շարժման արագանակը

ժամանակին այնպես կզա, վոր մենք այժմ յերազել ել չենք կարող: Իմ կարծիքով այդ նոր Տնտեսական Քաղաքականության առաջին հիմնական ֆաղաքական դասն ե» (ՈԿԿ Ա Համագումարի զեկուցումից) :

ԱՆՀՐԱԺԵՑ Ե ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻԶՈՑՈՎ ԴԱՆԴԱՉ, ԲԱՅՑ ՄԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄԻԼԼԻՇԽՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Խորհրդային իշխանությունը ի՞նչ պայմաններում է ստիպված բանվորների և գյուղացիների շաղկապը հիմնելու, բավարարելու գյուղացիների կարիքները և աստիճանաբար նրանց դրությունը բարելավելու։ Այն ժամանակ, յերբ մեր արդյունաբերությունը լիովին չի վերականգնել պատերազմից ստացած վընասները, յերբ, ինչպես Լենինն եր ասում, մեր գյուղում գեռ կիսավայրենություն կա, տասնյակ վերստեր ճանապարհներից զուկ են։ Յերբ գյուղացիների մեծամասնությունն անգրագետ է, սովոր ե ամեն ինչ հին ձևով կատարել, քչերն են կարդում գիրք ու լրագիր։ Յերբ մեր գյուղացուն գերմանացի կամ դանիացի գյուղացունետ համեմատելուց տասնյակ թերություններ կտեսնենք։

Ամենից ավելի բավ Լենինն եր տեսնում մեր։

Իր վերջին հոգվածներում, վորոնց կարելի յեր մեր առաջնորդի կտակներն անվանել, նաև ասել ե, վոր գյուղացուն հարկավոր ե իր բոլոր թերություններով ու սովորություններով վերցնել և աստիճանաբար, քայլ առաջ քայլ,

վարժեցնել նրան լավին, սովորեցնել գրքին ու
լրագրին, լավացնել նրա կենցաղը, բարձրա-
ցնել նրա կուլտուրական պահանջները։ Մինչ
այն ժամանակ, յերբ միլիոնավոր գյուղացի-
ներ անգրագետ կմնան, չի կարելի լավը կա-
ռուցել, չի կարելի սոցիալիզմ կառուցել։

«Առանց գլխովին գրագիտության, առանց
անհրաժեշտ չափի գիտակցության, առանց
բնակչությանը բավականաչափ վարժեցնելու,
վոր ոգովին գրքից, և առանց այդ բանի համար
անհրաժեշտ նյութական հիմքի, առանց բավա-
կանաչափ ապահովության, որինակի համար
չբերք տարուց, սովոր և այլն, — առանց դրան
մենք մեր նպատակին հասնել չենք կարող»։

ՅԵՎ ԼԵՆԻՆՐ ԿՄԱԿԵԼ Ե, վոր Հոկտեմբերյան
Հեղափոխության 10-ամյակին, 1927 թվին,
Խորհրդային Միության մեջ անգրագետ մարդ
չւինի։ Խորհրդային իշխանությունն իր բոլոր
ուժերն ե լարում այդ նպատակի համար։ **ՅԵՎ**
նա կանչում ե բոլոր գիտակից քաղաքացիներին
ողնելու անգրագիտության վերացման գործին,
հիմնում ե «Կորչի անգրագիտությունը» ընկե-
րություններ, վորպեսզի 10-ամյակին անգրա-
գետ չունենանք։

Այն ժամանակ, յերբ Արևմուտքի գյուղա-
ցիները լայն չափով ողտնվում են մեքենանե-
րից, մեր գյուղացիները դեռ ստիպված են չառ
անգամ «չութ»-ով վարել, քանի վոր իմպերի-

ալիստական և քաղաքացիական յերկարամյա
պատերազմներից հետո հարկավոր քանակու-
թյամբ մեքենաներ չկան: Բայց բանն այն չե-
միայն, վոր պակասում են մեքենաներ: Բանն
այն ե, վոր մեզանում գյուղացիների մեծ մա-
սը գեռ կազմակերպված ու միացած չեն: Տը-
րակտորի նման մեքենան կարող ե տասնյակ
տնտեսությունների ծառայել: Իսկ չե՞ վոր ե-
լեքտրոֆիկացիան հարյուրավոր, հազարավոր
գյուղական ծխերի ուժ ետալու: Մի գյուղա-
ցու ուժը չի պատի մենակ իրեն համար ձեռք
բերելու տրակտոր կամ այլ մեքենա: Նշանա-
կում ե ինչքան շատ կազմակերպվեն գյուղա-
ցիները, այնքան ավելի շատ հավաքական ու-
ժերով կդիմեն մեքենաների ոգտագործման:
Հարկավոր ե մեր գյուղական ծխերը կազմա-
կերպել և միացնել: Յեվ լենին ասում եր, վոր
այս գործում հրամայել չի կարելի: Միայն
կարգադրելով կազմակերպություն չես ստեղ-
ծի, գյուղացիները չեն լսի: Հարկավոր ե այդ
բանն անել աստիճանաբար: Կոռպերացիոնի
ճանապարհով մենք գյուղացիությանը պիտի
կազմակերպենք ու միացնենք:

«Կոռպերացիան հեշտացնում ե միլիոնա-
վոր ազգաբնակչության միությունն ու կազ-
մակերպությունը, ապա գլխովին ամբողջ բը-
նակչության: Իսկ այդ հանգամանքն իր հեր-
քին հսկայական դրական յերկույթ ե պետա-

կան կապիտալիզմից հետագայում սոցիալիզմին անցնելու տեսակետից» («Կոռպերացիայի ժամանություն» Հոդվածը) :

Աստիճանաբար, քայլ առ քայլ, մենք մեր բնակչության պետք ե ավելի կուլտուրական դարձնենք, գործնականում ցույց տանք գյուղացիության կոռպերացման ոգուաները:

«Իսկապես մեզ մնացել ե «Միայն» մի բան՝ մեր ժողովուրդն այնքան կուլտուրական դարձնել, վորպեսզի նա հասկանա կոռպերացիային, գլխովին մասնակցելու ոգուանը և կարգավորի այդ գործը: «Միայն» այդ գործը և ել ուրիշ «իմաստություններ» մեզ հարկավոր չեն սոցիալիզմին անցնելու համար»:

Ինվպես յերեսում ե Լենինի վերև բերած խոսքերից, կոռպերացիան այնպիսի մի գործ է, վոր կարելի յե հիմնել միայն իրենց բանվորների և գլխավորապես գյուղացիական ժամանակցությամբ: Լենինը շատ պարզ տեսնում եր, վոր մեզանում դեռ շատ հեռու ենք այն վիճակից, յերբ յուրաքանչյուր գյուղացի կհասկանա իր սեփական շահը կոռպերացիայից: Նա առաջուց ասում եր, վոր այդ «միայնը» այնքան էլ հեշտ չի, վոր կյանքում գործնականապես այն կիրառելու համար հարկավոր ե բավականաշափ ժամանակ:

«Բայց այդ «միայնը» իրականացնելու համար, մի ամբողջ հեղաշրջում ե հարկավոր,

ժողովրդական մասսաների կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան»:

ՄԵՆՔ ԱԿՍՈՎՄ ԵՆՔ ՆՐԱՆԻց, ԻՆՉ ՎՈՐ ՊԵՆԵՆՔ:
ՆԵՊԸ (այսպես ե կոչվում Նոր Տնտեսական Քաղաքականությունը) մտցնելով մենք հարմարվում ենք մեր գյուղացու կյանքի պայմաններին: ՆԵՊԸ գյուղացու համար վոչինչ անհասկանալի և խրթին բան չի տալիս: Հավասարվում ենք շարքային գյուղացուն և տատիճանաբար, քայլ առ քայլ, մի ամբողջ ժամանակաշրջանում սովորցնում ենք նորեն այնպես, վոր գյուղացին տեսնում ե յուր ամբողջ ոգուտը:

«Դրա համար ել մեզ համար կանոն պիտի լինի՝ վորքան կարելի յե ֆիշ իմաստություն անել: Այդ տեսակետից Նեպն առաջխաղացում և այն իմաստով, վոր նա հարմարվում ե ամենից սովորական գյուղացու մակարդակին և նրանից չի պահանջում վոչինչ բարձր: Բայց վորպեսզի Նեպի միջոցով հասնենք ամբողջ ազգաբնակչության գլխովին մասնակցությանը կոռպերացիային—ահա դրա համար պահանջվում ե պատմական մի ամբողջ շրջան: Մենք կարող ենք լավ դեպքում այդ շրջանն անցել մեկ-յերկու տասնամյակում: Բայց և այնպես այդ լինելու յե պատմական առանձնակի շրջան»: (Լենինի Հողվածը «Կոռպերացիայի մասին»):

ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԵԼԵԿՏՐՈՓԻԿԱՑԻԱՆ ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԵՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պայքար ճնշման դեմ, միլիոնավոր աշխատավոր մասսաների գրությունը բարելավելու, սոցիալիզմ հիմնելու համար—ահա թե ինչին նվիրեց Լենինն իր ամբողջ կյանքը։ Այդ նպատակը նա յերբեք չեր մոռանում և միշտ դեպի այդ եր գնում։

Նա կարողանում եր գտնել և առաջ քաշել հատկապես այն գործնական միջոցները, վորոնք վերջի վերջո տանում ելին սոցիալիզմի բրականացման նշած նպատակին, կապիտալիստների և կալվածատերերի լծի նախկին տիրապետության թագավորութ։ տեղ աշխատանքի, հավասարության և յեղբայրության թագավորությունը հիմնելու։ Յեվ նա մատնանշեց, թե ինչպես մենք մեր հետամնաց գյուղիական մասսայով կարող ենք այդ նպատակին հասնել։

Ահա թե ինչ եր գրում Լենինն այդ մասին։

«Նայեցեմ Խ. Ս. Հ. Մ. (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության) քարտեզին. հյուսիսում՝ սկսած Վալոգդայից, հարավ-արևմուտքում՝ Թաստ-

վից և Սարատովից սկսած, արևելքում Որեն-
բուրգից և Ումսկից սկսած անձայր տափարակ-
ներ են սկսվում, վորոնց վրա տասնյակ կու-
տուրական պետություններ կտեղավորվեն։ Յեվ
այդ ամբողջ տարածությունների վրա քագա-
վորում է նահապետական բարքը, կիսավայրե-
նությունն ու կատարյալ վայրենությունը։
Խոկ մենացած Շուսաստանի գյուղացիական
խուլ անկյուններում ի՞նչ կա. ամեն տեղ, ուր
տասնյակ վերստերով արահետները, կամ ավելի
հիշտ՝ տասնյակ վերստեր նահապարհից գուրկ
գյուղերը հեռու ընկած են յերկարուղիներից,
այսինքն կուլտուրայի, կապիտալիզմի, խոշոր
արդյունաբերության և մեծ քաղաքի կապից։
Միքե այդ բոլոր վայրերում դեռ չի իշխում
նույն նահապետական բարքն ու կիսավայրե-
նությունը։

Հնարավո՞ր է արդյոք այդ դրությունից
անմիջապես սոցիալիզմին անցնելը կիրառել։

Այս՝, հնարավոր ե...քայց միայն մի պայ-
մանով։

Այդ պայմանը—ելեքտրոֆիկացիան է։

Յեթե մենք կառուցենք շրջանային տաս-
նյակ ելեքտրոկայաններ... յեթե մենք այդտե-
ղից եներգիա տանք ամեն մի գյուղի, յեթե
մենք ձեռք բերենք անհրաժեշտ քանակությամբ
ելեքտրո-մոտորներ և այլ մեքենաներ, այն
ժամանակ կարիք չի լինի նահապետական բար-
քից սոցիալիզմին հասնելու համար անցման
աստիճանների»։

Բայց ԵլեքտրոՓիկացիայի զարգացման համար, Ծուսաստանի հազարավերստ տարածությունների վրա ուժեղ Ելեքտրոկայանների ցանց կառուցելու համար հարկավոր ե ժամանակ ու միջոցներ։

Միևնույն ժամանակ ԵլեքտրոՓիկացիայի զարգացման արագությունը, վոր անհրաժեշտ պայմանն է գյուղում սոցիալիզմ հաստատելու, մեծ չափով կախված ե մեր գյուղացիների կազմակերպված և կուլտուրական լինելուց։ ԶԵ՞ վոր ԵլեքտրոՓիկացիան մի անգամ ից հազարավոր գյուղական ծխերի կարիքներն ե հողայու։ Այն ժամանակ, յերբ այդ հազարավոր ծըխերի բնակչությունը գրագետ լինի, բավականաչափ զարգացած և կուլտուրական, նա կը հասկանա այն հսկա թեթեությունը, վոր տալիս ե ԵլեքտրոՓիկացիան։ Այն ժամանակ նա ինքն իր ուսերի վրա չտեսնված արագությամբ կտանի այդ ցանցը և կառուցումների թափը կարագացնի։ Դրա համար ել Լենինը մատնանշում եր, վոր մեր պայմաններում, ԵլեքտրոՓիկացիայի զարգացման հետ միաժամանակ, կոռպերացիայի պարզ աճումը, վոր բնականաբար կախված ե կուլտուրականության և գրագիտության աճման հետ, նշանակում ե և սոցիալիզմի աճում։ Այնպիսի աճում, վորի բնթացքում վոչ մի գյուղացու պարանով չեն քաշի, այլ ինքը գործով կհամոզվի այդ բանի ամբողջ ողտակարության։

«Այժմ մենք կարող ենք ասել, վոր մեզ համար կոռպերացիայի պարզ աճումը նույնանիշ

Ե (այսինքն միևնույնն է) (վերև ցույց տրված «չնչին» բացառություններով) սոցիալիզմի անման»

«Յերբ պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռնումն է, յերբ արտադրության բոլոր միջոցներն այդ իշխանությանն են պատկանում, մեզ մոտ, իսկապես, մնացել է միայն ազգաքնակչության կոռպերացման խրնդիրը։ Ազգաքնակչության ամենաշատ կոռպերացման պայմանով ինքն իրեն կհասնենք . . . սոցիալիզմին։

Բայց առայժմ մենք վոչ մեկից և վոչ եւ մյուսից լրիվ չափով չունենք։ Հարկավոր ե ամեն տեսակի խնայողությունների միջոցով, թեկուզ դանդաղ, բայց կառուցել հզոր ելեքտրոկայաններ, բարելավել մեր արդյունաբերությունը։

Միաժամանակ հարկավոր ե միլիոնավոր գյուղացիների լուսավորել, այսինքն զբաղվել, ինչպես Լենինն ե ասել, կուլտուրական խնդրով։

Միանդամից այդ անել չի կարելի։ Դրահամար անհրաժեշտ ե, ինչպես Լենինի վերև բերված խոսքում եր ասված, պատմական մի ամրող ժամանակաշրջան։ Յեվ մեր առաջիկանելիքը բանվոր դասակարգի և գյուղացիության հարաբերությունների ուղիղ հաստատելըն ե այդ ժամանակաշրջանի համար։

Մի այլ տեղ, 1922 թվի նոյեմբերի 19-ին Մոսկվայի Խորհրդի պետական արտասանած ճառում Լենինը հայտարարել է. «Թույլ տվե՛

վերջացնել, հայտնելով խոր համազմունիք, վոր
ինչ ժամ ել այդ խնդիրը դժվար է և ինչ ժամ ել
նա մեզ համար դժվարություններ ե հարուցում,
—մենիք դարձյալ միասին . . ինչ կերպ ել լինի այդ
խնդիրը կլուծենիք այնպես, վոր նեպային Ռու-
սաստանը կդառնա սոցիալիստական Ռուսա-
տան» :

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԼԵՆԻՆԸ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՅԵՎ ՎԱՐԺՎԵԼ ԵՐ ԼՍԵԼՈՒ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՁԱՅՆԸ

Լենինը շատ բարձր եր գնահատում դյու-
ղացիների նամակները:

«ԶԵ՞ վոք այս վոչ մի զեկուցման մեջ չես
լսի»— ասում եր Լենինը, յերբ կարդում եր
դյուղացիների նամակները: Նա միշտ հաճույ-
քով և մեծ ուշադրությամբ եր լսում դյուղա-
ցիների խոսակցություններն այն մասին, թե
ինչպես են ապրում, ինչ ցավ ունեն, դյուղն
ի՞նչ կարիք ունի:

Նա «Բեղնատա» թերթից պահանջում եր
զեկուցումներ դյուղացիների նամակների մա-
սին: Նա խնդրում եր զեկուցումների մեջ հա-
ղորդել, թե՝

1. Գյուղացիներից թերթը քանի^օ նամակ
է ստանում,
 2. Ինչի մասին են գրում դյուղացիները,
 3. Ինչից են գանգատվում և այլն:
-

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ.— ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ.— ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Ի՞նչ գիտենք մենք Լենինի մասին:

Մենք գիտենք, վոր նա պայքարել ե կալ-
վածատերերի ու կապիտալիստների դեմ: Նա
ղեկավարել ե Հոկտեմբերյան հեղաշրջումը,
նա կազմակերպել ե սպիտակ գվարդիականնե-
րին հետ շպրտելու գործը, նա ղեկավարել ե
Խորհրդային պետությունը, նա ստեղծել ե
բանվորների և գյուղացիների միությունը:

Ի՞նչ գիտենք մենք Կոմունիստական կո-
ստակացության մասին:

Մենք գիտենք, վոր կուսակցությունը
պայքարել ե կալվածատերերի և կապիտա-
լիստների դեմ, մենք գիտենք, վոր կուսակցու-
թյունը ղեկավարել ե Հոկտեմբերյան հեղաշր-
ջումը: Կուսակցությունը քշել ե կալվածատե-
րերին, հողը վերցրել և տվել ե գյուղացիներին:

Մենք գիտենք, վոր կուսակցությունը քաղա-
քացիական պատերազմն ե ղեկավարել: Մենք

գիտենք, վոր կուսակցությունն այժմ ղեկա-
վարում է Խորհրդային պետությունը և մեր
անտեսությունը կարգավորում: Շատ բան
մենք գիտենք Կոմունիստների կուսակցության

մասին, բոլորը չի լինի ասել։ Պատմելով չի
կարելի վերջացնել այն պայքարը, վոր կու-
սակցությունն իր ուսերի վրա յե տարել։ Կո-
մունիստական կուսակցությունը ամբողջ ժա-
մանակ պայքարել է բանվորների և գյուղացի-
ների շահերի համար։

Մի խոսքով, ինչ վոր մենք գիտենք Լենի-
նի մասին, նույնն ել գիտենք Կոմունիստական
կուսակցության մասին։ Լենինն ու կուսակ-
ցությունն իրենց կյանքում միաձույլ են յե-
ղել, իրարից անբաժան։ Միասին են պայքարը
տարել, միասին են սխալվել և միասին ել սր-
խալներն ուղղել։

Ո՞վ եր Լենինք Կոմունիստների կուսակ-
ցության մեջ։

Լենինը կոմունիստական կուսակցության
առաջնորդն եր։ Նա զեկավարում եր կուսակ-
ցությունը։ Նա նավապետն եր այն նավի, վոր
կոչվում ե Ռ.Կ.Կ (Ք)։ Այժմ Լենինը մեռել ե։


Դեկավարը չկա։ Բայց նա, վորպես լավ
վարպետ, իր կենդանության ժամանակ իրեն
լավ ողնականներ պատրաստեց։ Մեռնելիս,
Լենինը ցույց տվավ այն ուղին, վորով յեր-
կար տարիներ պիտի գնանք։ Նա վոչ միայն
այդ ճանապարհը ցույց տվավ, այլ և պատմեց
մեզ, թե այդ ճանապարհի վրա ի՞նչ արգելք-
ների և վորտեղ պիտի հանդիպենք, ինչ ստոր-

ՀՐԱՄ ՔԱՐԵՐԻՑ պիտի խուսափենք, վոր չջարդվենք։ Նա կուսակցության կտակել է պահպանել բանվորների և գյուղացիների միությունը։

Յեվ ահա մի քանի տարիներ են, վոր առանց Լենինի Կոմունիստական կուսակցությունը շարունակում է զեկավարել Խորհրդային Հանրապետությունների Միությունը, պաշտպանել աշխատավորների շահերը, քիչքիչ առողջացել մեր տնտեսությունը և հզորացնել բանվորների և գյուղացիների միությունը։

Աշխատավորների մահացած առաջնորդի տեղը գրավում է հավաքական աշխատանքը, կուսակցության ել ավելի լարված աշխատանքը։ Կուսակցությունը հավատարիմ է Իլյիչի ավանդներին։ Այդ բանը հասկացել են բանվորներն ու գյուղացիները։ Նրանք ել ավելի յեն համախմբվում Կոմունիստական կուսակցության շուրջը։ Բանվորները հազարներով են մտնում կուսակցության մեջ։ Գյուղացիները համախմբվում են Կոմունիստական կուսակցության շուրջը։







14. Իս. Տեր-Ներսիսյան .—Ինչու մշակել խաղողի
այդիները (28 նկարով) 35 »
15. Յերեսներս դեպի գյուղ .— Անդրկովկասյան
Յերկրային Կոմիտեյի բանաձեռ գյուղացիական
հարցի մասին, Ս. Շակունցի նախարանով
(սպառված) 14 »
16. Հայաստանի Կոմունիստական կուսակցության
կենտրոնական Կոմիտեյի Զորբորդ Պլենումի Բա-
նաձեռը (սպառված) 15 »
17. Ռ. Արմենյան .—Խոշոր յեղջյուրավոր անասուն-
ների ժանտախտը 15 »
18. Հ. Ազատյան .—Գյուղատնտեսական բանվորու-
թյունը և միջազգային կոմունիստական շար-
ժումը 40 »
19. Ն. Խանի-Աղյան .—Ուղեցույց արդյունավետ խո-
ղարուծության 15 »
20. Ֆերդինանդով .—Հավաքուծ . և նրա ողուտն . 20 »
21. Ա. Դանելբեգ .—Լավ ե ուշ, քան յերբեք (առլո-
ւիլիյես) 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան .—Կտավատը և կա-
նեփը 20 »
23. Ս. Լուկաշին .—Անդրկովկասի տնտեսական դրու-
թյունը 15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության
անտառներից փայտեղեն բաց քողնելու համար
(պաշտոնական)
25. Պրոֆ. Ավ. Քալանքար .—Կաթնառու կովի կե-
րակրումը 30 »
26. Ա. Ա. Տրիֆոնով .—Ինչու պէտք ե ցելը շուտ անել 15 »
27. Ա. Բակունց .—Գալուստի վիկը (
28. Ա. Բակունց .—Կարտոֆիլի մշակ գԱԱՀիմնարար Գիտ. Գրադ.
29. Սուբբոտին .—Կովի դատը (ազր


ԳԱԱՀիմնարար Գիտ. Գրադ.



FL0045523

[304.]

30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան .—Տիղկանեփ
31. Իս. Տեր-Ներսիսյան .—Պտղատու ծառերի
ստուներն ու հիվանդությունները
32. Խ. Ավդալրեզյան .—Գյուղի հողաշինար
թյունը
33. Արագի .—Տրակտորը (աղբո-պատմվածք) 15 »
34. Յալտացի .—Խորհրդավոր տրանսիներ (աղբո-
զրույց) 15 »
35. Խոկո-Ապեր .—Գյուղատնտես-անասնաբույծը և
իր աղբո-զրույցը 20 »
36. Ս. Ֆրիդոլին .—Տասը պատգամ անասնապահին
(բ. տպագր.) 20 »
37. Մ. Խանգաղյան .—Մեղվարուծության դորձնա-
կան ձեռնարկ 60 »
38. Արամայիս Յերգնիկյան .—Մեր գյուղատնտեսու-
թյան հերթական խնդիրներից 40 »
39. Ա. Արանասյան .—Գութան, թե՝ արոր 10 »
40. Վ. Բոյկով .—Այժն աղքատի կովն և 20 »
41. Իս. Տեր-Ներսիսյան .—Գոմաղբը 20 »
42. Ի. Կուզնեցով .—Լենինը և գյուղացիությունը 30 »



ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հ. Ազատյան .—Յեռաղաշտից դեպի սոցիալիզմ՝
կոռպերացիայի վրայով
2. Ա. Մուշեղյան .—Անտառը պետք է հաշվով կարել:

ԴԻՄԵԼ՝ Յերկան, Հողժողկոմատ, Հրատարակչության,
Պետիրատի կենտրոնական և գավառա-
կան գրախանութեներին, Գավիհողրա-
ժիներին: